

7538

910.4

W-51

1896

9

Յ Ո Ւ Շ Ք

Կ Ա Մ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ք

910.4
Q-51.

W

ՅՈՒՇՔ ԿՍՄ ՅԻՇԱՏԱԿՔ

ԼՈՆԴՐԱՅԻ

ԳՐԵԱՑ

ԵՐՄԱՆ ԴԵՄՈՍՅԵՐՈՒ



1004
17974

g

ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1896

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Առիսարհիս մեծագոյն և քան զամենն աշե-
լի քաղմաւարդ, հարուստ և վաճառաչան քա-
ղաքն է Լոնդրա. զայն տեսողաց բերնէն մարդ
հիսացո՞ւմ միայն կը յտէ, և ոչ երբէք իրական
նկարագիր. ամենայն գրիչք և հանձարք կը
փոքրիական ևորս մեծոքեան առջև: Այնպիսի
հրապոյոյ՞ մ' ոչնի այդ եզակիան քաղաքն, որ
նախ կը դիւրէ, յետոյ կ' ափշեցընէ և գրեթէ
անզգայոքեան միձակի մէջ կը ձգէ զմարդ՝
խոշոն և չափազանց զգացմանց ներքև ընկ-
մեղով, ինչպէս պատահեր է Երևոնոյ Գե-Ա-
միչխի:

Սա արդէն ծանօթ է « Բագմալիպի » ըն-
բերցողաց՝ Կ. Պոլիս և Սիրս գողտրիկ գրոշ-
բեւոյրք: Ենած է յՈՒՆԵՍԿ՝ Պիեռնետի մէջ,
յամիկն 1846. յետ լիռոյի յաջողոքեանքք ա-
ւարտերոշ իշր ոշտոշմանկան շրջանը Կոշնեոյի
լիկեոնիկն մէջ, գրեթէ բնադատ՝ մտաւ ի զի-
նոշրական վարժարանն Մոդենայի, ոշր զի-
նոշց գործածոքեան մէջ այլ՝ հաշարար գրիչ
քաջ և ձարտար հանդիսացաւ, որուն փորձը
ցըցոշց յետոյ Կոշտոգայի պատերազմիկն մէջ

յաւիկն 1866: Մեկ տարի վերջ՝ փորքեւտիոյ մեջ Զինուորական Իտալիա կոչուած բերքիկն տեսնոջ եղաւ, յորում՝ գեղեցիկ վիպեր և իշր գիւնոնորոշքեան միջոց պատահած դիպոշածոց նկարագիրներ հրատարակեց, որոնք հրաշալիք մ' են՝ բէ գգացման մասար, և բէ գոշարմաբանոշքեանր և միանգամայն յեգոշիկ և ոճոյն գեղեցկոշքեանր: Դեռ բորբոյիկն ձեռքէ չի ձրգած գեկըր՝ հրատարակեց Զինուորական կեանք կոչուած գիրքը, որով ցրցոշց երիտասարդ հեղինակն՝ բէ գրիչն աշելի գորսաշոր և օգտակար գործիք մ' էր իշր ձեռքը քան սոշրն: Այնուհետև բոշորոշց ի սպաս գիւնոնորական ասպարեգը, և սկսաւ գրականոշքեանր պարասիլ, աւ որ բնական միտոշում ի կը գգայր արդեկ մանկոշքեկն ի վեր: Գրականոշքեան մեջ բորբոյիկն նոր մասնամիշոյ մ' բնորեց իրեկ, որ իրեկ յաշաւջ անմշակ բոշորոշած էր Իտալիոյ մեջ, որ է՝ պատմոշքիշն ոշղևորոշքեանց, նկարագրոշքիշն օտար երկիրներոշ և սովորոշքեանց:

Եախ Սպանիայիկն սկսաւ, այն երկրեկն՝ որ չի է ասպեւտական համբաւոյլ և քերքոշական բոշոյցներով: Այս գրքիկն մեջ՝ նիշքոյն յարմար՝ փափոշկ և գգայոշն ոճ մ' ոշնի հեղիկնակս. իշր վրայ ըրած տպաշորոշքիշեկք բորբոյն այլ յոշաւաշոր և գոշարք կեկիք մի կը կրեկ վրանիկն յաշատեսոշքիշն մի, որ բնաւ չի տեսնոշիք իրեկն միշս գրոշքեանց մեջ: Սակայն իշր հանմաբոյն ձկոշնոշքիշեկը և նկարագրոշքեան ձոխոշքիշեկը փորձեւոշ համար՝ կը բոշոր Իրեկեան բերակոշոշոյն ջերմիկ պայծաշոշքիշեկը, և կ'ան-

ցեկ Ստորիկն-Նահանգաց մաշախաւաւտ և գոշրտ երկիրը: Յետոյ, հանսոշտ ակնարկներ և սարոյլ Պարիտոշ և Լոնդրայի՝ գորս շասպոյլ այցեկեր էր, կը դատնայ արևոտ աշխարհները. նախ ի Մարոկ, որոշն վրայ գրեւոշ միշոց՝ կըցաւ յոշոյ միօրիկնակոշքեկն գգոշաւաւ, ինչպիս գիտցաւ ևս՝ Հոլանդայի մեջ՝ գգոշանայ մաշախոշոյի և ստոշերի միօրիկնակոշքեկն. ապա ի Կ. Պոլիս, յորում տեսաւ և հրաշալի կերպով նկարագրեց երկոշ աշխարհներոշն իրարանցոշը, քախոշը, իսաշնոշարդը Էշրոպիոյ և Ասիոյ, երկոշ քաղաքականոշքեանց, երկոշ կրօնից, և զանազան ազգերոշ պայծաւ երկրի և ծոխոշ ազդեցոշքեանց ներքև, որոնք աննման են աշխարհիս վրայ:

Եոր տեսակ գրոշքեան մ' աշիք տոշիկն իրեկ գաղքականոշքիշեկք. Հարաւայիկն Աւերիկա գաղքոյ Իտալացիք, շետով հեղինակիս համբաւը՝ այն տեղ հրաշիքեցիկ գիկըր, որպիս գի իրեկն բոշոած՝ բայց արտով կասոշած հայրեկնացը վրայ խօսի, որ այն վերջիկն տարիկներոշն մեջ բաշական փոխոշեր և զարգացեր էր ոշսնամիք և ձարտարոշքեանրք: Բերոշնցեցաւ նա հրաշեկր. և միկըրեա անեկրն այլ և սաշելի գաղքականք՝ կը սպասեկն բէ աղոնշղևորոշքեան արդիշեկք պիտի չիկեր գիրք մի, յորում նկարագրեր այն երկիրները և մարդիկը, նա ընդ հակաշոշակն՝ Ովկիանոշը կիտրած պահոշն՝ կը մտածեր բորբոյիկն ոշրոշ կեր ոճով գրոշքիշն մի հրատարակեյ, յորում երկեր իկրն միանգամայն իբր յոշրջ մատեկագիր, խորարափանց և դիտոյ միտք:

Ո՛րչափ որ տարիքն յառաջեց՝ ևնչնչափ ևս փորձ եղաւ աշխարհի և մարդկային ընկե-
 յոչքեանց, որով իւր ևսխիկն յաւատեւոչքիւնն
 ևս յռնտեւոչքեան փոխուեցաւ: Այնուհետև
 բնոչքեան ամենայն երևոյցք և աւարկայք
 յայս ևորս կորոշսին իրենց փայլը. ինքն այլ
 անփոփեց իրեն քերթողական բռնիք՝ որ քեր-
 ևս յոգևած էր, և սխառ ըստոյական և հոգեբա-
 ևական ոչսոսնուսիրոչքեանք պարսպիչ, որոյ
 արդիւնք եղաւ Բարեկամք անուանք գիրքը:
 Սոչք դիտողոչքեանք լի գոչքիւն մ'է, այլ
 յաճախ սկեպտեան գաղափարներով տոգո-
 յոշած, որոչ ևկատակն է ցոչքընէր — տխուր
 ձընարտոչքիւն — քէ սակաչք եւ տոյոգ բա-
 րեկամք՝ աշխարհիս վրայ տիրապետող ան-
 ձևասիրոչքեան, շահասիրոչքեան, ևսխանձոչ
 և այլ պեպեպ կրից պատերազմիկն մեջ: Միևչ
 հասարակոչքիւնն իւր սովորական իսանդիւր գրա-
 դած էր կարդարոչ այն էջերը, սակաւ մի ափ-
 շած Դէ-Ամիչխի մոգական գրչիւն գծած ևոր
 ոչողոչքեան վրայ, հեղինակն ըչիլ — ինչպիս
 սովոր էր միչոս — ոչրիչ երկասիրոչքիւն մի
 կը պատրաստէր, որոչ ևերչնոչքիւնն ոչնեցեր
 էր ծովոչն վրայ յԱմերիկա ձանապարհորդած
 միչոց: Կաշոչն վրայ ձանչգաւ ևս մօտեկ գաղ-
 բողաց իտոչքը, որոնք՝ մեծամեծ յոչսերով լի՝
 դեպ ի ևոր աշխարհը կը տանեիկն իրենց բշոչա-
 սոչքիւնները, զանոնք դարմաններոչ յոչսով ե-
 յևակայեալ Երրորսրեան (1) աշխարհի մի

1. Eldorado, սպանիական բառ է, որ կը նշանակէ

երագած աւատոչքեանց մեջ: Կոչս բշոչաւոչ-
 քեանց վրայ յոչգոչած, տեղեր՝ մարդիկ և ի-
 րեր ևկարագրերոչ վարժ գրչովը վիպասանոչ-
 քիւն մի գրեց, Ովկիանոսի վրայ տիրող-
 սով, յորոչն ընրերցոյն կը գգայ հեղինակիկն
 կարեկցոչքեան բարսխոչնը և սրտիկն դաւ-
 ևոչքիւնը՝ որ չէ կարող օգնէր այնքան բշոչա-
 սոչքեանց: Հագիւր քէ սոչն գիրքը աւարտեց,
 ոչրիչ բշոչաններոչ իտոչքը մ'այլ գրաւեց ևորս
 ոչըր և գոչքը, այս է՝ մանկոչքիւնն, որ դըպ-
 րոցական առաջիկն տարիներոչն մեջ քերա-
 կանական աշերթոյ մանրամասնոչքեանց ևերքի-
 ընկհոչած և հեռակայ դասագրքեր ձեւերիկն
 տրոչած, բնաւ ըսանկն և կրոչքեան մեջ
 գգայի յաւաչադիւնոչքիւնն չեկ ընէր: Այս բա-
 ևիկն դարման մ' ընէրոչ ևկատակաւ գրեց Սեր-
 սոր, — այսպիս կոչէր է՝ գի տոյոց տիրոչը
 կրքերոչ պիտի ծաւայէ, — յորոչն լի եւ
 այնպիսի աւարիկի և վեհանձն գաղափարներ,
 որ անկարելի է կարդալ գայն առանց անոչը
 գգացոչն մի կրերոչ: Սոչն շրջանակիկն մեջ
 մտնեիկն յետոյ, Դէ-Ամիչխի աշակերտներեկն
 վարժապետաց երաւ, որոնք ևնչնչափ բշոչաս
 եկն, յաճախ զրկմանց և չքաւորոչքեան եկար-
 կոչած, որոնց կրածներն քէ և անծանօր չեկ
 հասարակոչքեան, այլ գրեքէ միչոս մոչցոչած
 և անփոյք եղած. սոչն աւարիւ գրեց Վարժա-
 պետի մի վեպն: Այս եղաւ Դէ-Ամիչխի վեր-

Ովկեջ. կը գործածուի սա՝ երևակայեալ աշխարհ մի
 նշանակելու համար, ուր կը գտնուին բոլր թէ ամեն
 տեսակ հարստութիւն և երջանկութիւն:

ջին գրոշքիան, երե շոգեկը յիշել նորս ոչ-
րիչ ձեռնարանական և դպրոցական հանդիսից
առքիչ խօսած բազմարիչ ձևերը :

ԳԻ—Սևիսիսի գլխաւոր յատկոշքիանք են փա-
փոշկ զգայնոշքիան, յստակ բացատրոշքիան գա-
ղափարաց, ձոխ երևակայոշքիան, ջերմոշքիան
զգացման՝ որ սաստիկ կը յոշգե ընրերցողը,
պարզ և վայելոշչ ներդաշնակոշքիան ոձոյ : Սա-
կայն յաձախ իրեն ոշնեցած բոշնե տպաշո-
րոշքիանք ձգած են զիկըը ջափազանց զգաց-
մանց և բացատրոշքեանց մեջ . որով քե և ջի
սխալի բնաշ, բայց մերք ձընարիտ գրած ի-
րերն աշ այնչափ կը մեծցնե, կը ձոխացնե, կը
գեղեցկացնե, որ գրերե ձընարտոշքեան սահ-
մանեկ դոշրս կ' եշնե . այսպես, օրիկակ իմն,
այն սնձիկըը՝ որոնց այնպիսի գեղեցիկ ձիր-
քեր կ' բնծայե, կարծես քե իրականոշքեան մեջ
անկարելի պիտի յինի գանել զանոնք . այն
աշխոյժը և եշանդը՝ որով յաձախ հեղիկանիկ
աչքեկ արտատոշք կը հոսեն՝ գեղեցիկ աշ-
խարհի, սնեման տեսարանի, արոշեստի հրա-
շակերտի, կամ նշանաշոր մարդոշ մ' առջև,
պղպղակի կը նմանիկն՝ որ մեկ վայրկեկի մեջ կը
րոշոնիկն :

Գարով առաջիկայ գործոյս, սոյն Յուշք
կամ Յիշատակք, ինչպես կոչեր է գայն հեղի-
կակը, նախ և առաջ հրատարակուշեր են ի
Միլան, Իտալական պատկերազարդ Հանդի-
սին մեջ, առանց յատոշկ գիրք ձևացնելոշ
դիտման : Սակայն այնչափ ախորժելի եղան
ընրերցողաց՝ նկարագիրներոշ ձըդոշքեան և

կենդանոշքեան պատձաւաշ, որ ընրերցողը փա-
փաք յայտներ են՝ քե՛ հրատարակչիկ և քե
հեղիկանիկն՝ առանձիկ հատորիկ մի կազմելոշ
համար : Հեղիկանիկ շատ դժոշարոշքեանք հա-
շաներ է աշ փափաքիկն, ինդրելով հրատա-
րակչեկն՝ ծանոշցանել ընրերցողաց՝ քե այս է-
ջերն յրագրի համար գրոշած են, հետևարար
պետք ջե իրրոշ գիրք նկատել և քննադատել
զանոնք :

Հ . Յովն . Թորոսեան

ՅՈՒՇՔ ԼՈՆԴՐԱՅԻ

Ա

Կ'անձրևէր, ծովն յուզուած էր, նաւն մակոյկի պէս կը պարէր. Դիեպէն հազիւ կէս ժամ հեռացած՝ կենացս մէջ առաջին անգամ զգացի ծովու հիւանդութեան երեւոյթները: Նաւուն մէջ կային բազմաթիւ տիկնայք, մեծաւ մասամբ անգլիացիք, որոնք պանիր և ապուխտ կ'ուտէին ուրախ զուարթ, առանց նշան մ'անգամ տալու՝ թէ կը զգային այն սարսափելի ալէկոծութիւնը, որ իմ և այլոց աղիքները վեր վայր կ'ընէր, և մին արդէն արտունջէն աւելի բաներ զուրս տուեր էր բերնէն: Եւ սակայն ստոյգ է՝ թէ ծովու հիւանդութիւնն գերազանց կ'ընէ զմարդ բան ո՛ր և է մարդկային սնապարծութիւն: Եթէ կէս ժամ առաջ ըսէին ինձ. — Տէս, հոս այնչափ զրամ կայ՝ որ փոխանակ տասն-

ուհինդ օր միայն կենալու ի Լոնդրա, ինչպէս միտքդ զրեր ես, կրնաս այնու ամիս մի կենալ հոն, և ապա պտոյտ մ'ընել Սկոտլանդի մէջ և երթալ մինչև յիռլանդա. արդ այդ բոլոր զրամը քուկդ պիտի լինի, եթէ այս տիկնանց առջև այնպիսի դիրք մ'աւնուս՝ որ ծիծաղելի լինիս, — կը խոստովանիմ մեծաւ մտութիւնս, — այդ առաջարկութիւնը պիտի մերժէի: Կէս ժամ յետոյ՝ ընդ հակառակն, ինկեր էի՝ անսահման զգուանքով մի անձէս՝ երկու աղտեղի պարկերու վրայ, մէկ ոսքս արևելք և միս ոսքս արևմուտք երկնցուցած, զլանած և գլխարկս ճզմած մէկ ականջիս վրայ, տաքատս վեր ամբոփուած՝ որով կը տեսնուէր թիզ մի ձիւթապատ վարտիքս, զուրս կը պարտէր, և այնպիսի յուսահատ լքում մի տիրեր էր զրաս, որ կրնայի վհատառքեան ազեզ արձանի մի օրինակ լինել: Ո՛հ, պէտք է ըսել Փուշինեայ հետ, թէ ծովու հիւանդութիւնն սաատիկ և տագնապիչ հիշանդորտրիշն մ'է: Ուրիշ մեծագոյն տանջանք մ'էր ինձ՝ մօտս կեցող գաղղիացի խեղկատակ մի, որ հետս ի միասին մեկնած էր Պարիսէն, և ծաղրածելով կը զայրացնէր զիս, ամէն հառաչանքիս կրկնելով. — Բայց դռք հիշանդլէք, սիրեցեալ տէր իմ... և այլն:

Նոյն իսկ այն մտածութիւնը, — թէ այս երեկոյ պիտի տեսնեմ Լոնդրա — որ այնչափ կը յուզէր զիս առաւօտուն, նոյն միջոց անտանելի տաղտուկ մի կը պատճառէր ինձ: Եւ ըսել գարձեալ, թէ եկեր եմ այս տեղ, — կը մտածէի այն զառանցանացս մէջ, — իմ ընտրութեամբս՝ յօժարութեամբս, զուարճանալու համար: Ո՛հ, որչափ անմիտ եմ եղեր: Եւ մտածել, թէ ստիպեալ եմ նորէն անցնելու ծովէն: Ո՛հ, անկարելի է պիտի չընեմ այդ բանը, կ'ընտրեմ մեռնել... Յանձն կ'առնում մնալ Անգլիոյ մէջ... պիտի ջանամ միջոց մի գտնել Լոնդրայի մէջ ապրելու համար... կրպակի մի մէջ օգնական կամ սպասաւոր պիտի լինիմ, ուսուցիչ ի տալերենի... միայն թէ այլ ևս ծովու երես չի տեսնեմ: Լաւագոյն է մեռնիլ, երբ որ ժամս հասնի. այլ այսպիսի տանջանք ոչ բնաւ:

Մի քանի ժամ յետոյ Բրայտոնի երկաթուղոյ կայարանին մէջ կը ճաշէի, և Անգլիոյ մէջ մեռնելու դիտաւորութիւնը բոլորովին մտքէս հաներ էի:

Սկսեր էր մթնել, երբ ճանապարհ ելայ դէպ ի Լոնդրա. երկաթուղոյ կառաց անկեան մի մէջ կ'ծկեցայ և սկսայ այն մեծ մտածու-

թեան համը առնուլ՝ թէ մի քանի ժամէն Լոնդրա պիտի լինիմ: — Լոնդրա: — Կը կրկնէի այս անունը, հաճութեամբ մի կը հնչեցնէի զայն մտքիս մէջ, ինչպէս սեղանի մի վրայ կը հնչեցնեն ոսկի դրամ մի: — Լոնդրա: — Անբացատրելի ուրախութիւն մի կը զգայի ըսելու ինքնիրենս, իբր թէ չգիտնայի յառաջագոյն, թէ տարօրինակ քաղաք մ'էր այն, մեծ ծով մի, Բարեղոն մի, անզունդ մի, առասպելական իր մի: — Աշխարհիս ամենամեծ քաղաքն է, կը մտածէի, — և ասոր մէջ բացարձակ բան մի կայ, որ ուրիշ ոչ մէկ քաղաքի մէջ չի գտնուիր. վասն զի եթէ կան ուրիշ գեղեցիկ քաղաքներ, որո՞ւ համար կարելի է ըսել. — Ամենագեղեցիկն է: — Նոր հաճոյք մ'է յիշուի տեսնել մի բան, որ կերպով իւրք աշխարհիս վրայ ապահովապէս գերագոյն աստիճանը կը զրաւէ. բան մի, քան զոր անզրագոյն կարելի չէ ուրիշ բան մտածել՝ առանց երազոց աշխարհին մէջ մտնելու. բան մի՝ որուն առջև կրնաք ըսել. — Ո՛չ մէկ մարդ քան զայս աւելի մեծագոյն բան տեսած չէ: Յետոյ կ'ուրախանայի մտածելով՝ թէ կ'երթայի ի Լոնդրա առանձին, առանց ծանօթ մ'ունենալու այն տեղ, առանց յանձն-

արարական թղթոց, ինչպէս որ կ'երթայ մարդ՝ երբ ուզէ փորձել թէ ինչպէս կը կորսուի այն ուրիշանսին մէջ, կրելու համար այն երկիրդի զգացումը՝ զոր կ'ընեն մարդու վրայ անծանօթ մեծամեծ միջոցներն, ջախջախուելու համար, միով բանիւ՝ զգալու այն պարզ և բովանդակ տպաւորութիւնը՝ զոր կ'ընէ օտարականի հոգւոյն մէջ այն անհուն քաղաքն: Այս բանիս նկատմամբ այն առաւելութիւնն այլ ունէի՝ որ անզղիերէն բաւմ'անգամ չէի գիտեր. զբամն չափաւոր էր, պայուսակ մի միայն ունէի՝ որ մարդու գութը կը շարժէր. և վերջապէս այն ամէն բան՝ որ կարևոր է մարդուս ինքզինքը փոքրիկ և հէք ճանչնալու՝ մի մեծ անծանօթ քաղաքի մէջ: Այս ամէն բաները մտածելով, ձեռներս կը շփէի և կ'ըսէի. — Լոնդրո՛ւ, պատրաստ եմ:

Խոր գիշեր էր՝ երբ քաղաք հասայ: Առանց զգալու ներս մտայ, և զարմացայ՝ երբ նշան ըրին ինձ վար իջնելու շոգեկառքէն: Վար կ'իջնեմ, Լոնդոնրբիճի կայարանի ծածքին տակ կը գտնուիմ, կառքերու և լոյսերու հեղեղի մի մէջ: Ինձ ամենէն աւելի մտախի կառքին վրայ կ'եջնեմ և կառապանին թղթի կտոր մի կը ցուցընեմ, որու վրայ գրուած էին անունը և փողոցը այն պան-

դոկին՝ զոր ինձ խորհուրդ տուեր էին ի Պարիս: Կառապանն կը կարդայ զայն, նշան կ'ընէ թէ հասկըցաւ, և սակայն տեղէն չի շարժիր: Նշանացի կ'իմացնեմ իրեն որ կառքին վրայ ելնէ և մեկնինք. բայց նա անշարժ կը կենայ: Կը սկսիմ բարկանալ իրեն և զողղիերէն լեզուով ծանր խօսքեր ըսել. նա բան չի հասկնար, և հանդարտ յեցած դունտիկին՝ կը սկսի շաղփաղփել հետս անզղիերէն: Յուրա է՝ կը մտնիմ, — կ'ըսեմ ես, — ինչպէս ընելու է. և ծալելով բազուկներս՝ երեսը կը նայիմ. ինքն այլ բազուկները կը ծալէ և ինձ կը նայի. և այսպէս վայրկեան մի իրարու երես կը նայինք: Վերջապէս համբերութիւնս կը հատնի, վար կը ցատքեմ, կը պոսամ ախանջէն վար, — Զորի՛, — և ինքնիրենս կը սկսիմ երթալ: Վերջը հասկըցայ թէ զիս պանդուկը չի տանելուն պատճառը՝ տեղւոյն հեռաւորութիւնն է եղեր: Ինքնիրենս կ'երթամ. բայց ինչպէս և ո՞ւր: Կը խոստովանիմ թէ այն վայրկեանին լքում մի զգացի: Կայարանին այն մտքէ վեր ընդարձակութիւնն՝ որոյ ելքը չէի գտներ, չգիտնալս՝ թէ ո՞ւր պիտի երթամ գլուխս զարնեմ, այն առաջին անյաջող գիպուածն՝ որ ձախորդութեան մի գոյշակ կը թուէր ինձ,

1004
1797

3028 Լոնդրայի



պայուսակին ծանրութիւնն՝ որ կ'արգելոյր քայլերս, խոնաւութիւնն՝ զոր կը զգայի վրաս, զիշերն, խառնակութիւնն, այս ամէն բան տխրութեան և երկիւղի յանկարծական զրացում մ'ըրին վրաս: Յետ փոքր ինչ ժամանակ աստ անդ մոլորելու, անցայ մի գուռ և ինքզինքս զուրսը գտայ: Կարծեցի թէ խառնակութեան վհի մի մէջ ինկայ: Շառաշիւն մի կառքերու՝ զորս չէի տեսներ, սուշել մի շոգեկառաց՝ որոնք չէի գիտեր թէ ո՛ւսկից կ'անցնին, խառնակութիւն մի լոյսերու՝ վերը և վարը, ամէն կողմ և ամէն բարձրութեան վրայ, մառախուղ մի՝ որ չէր թողուր ինձ նշմարել ո՛չ կերպարանք և ոչ հեռաւորութիւն, երթեկութիւն մի մարդկանց՝ որոնք կարծես կը փախչէին. այս եղաւ ահա զիմացս ելած առաջին տեսարանը: Տատամ սեւով, կազալով՝ բաւական ծանապարհ կտրեցի, ապուշի նման, չգիտեմ գլուխս ո՛ւր. յետոյ, այլ ևս չկրնալով տանել պայուսակ՝ գետին գրի և կանգ առի: Բախտը բերաւ որ՝ աչքս վերցնելով՝ տեսայ զունաւոր լսարան մի, որուն վրայ գրուած էր, Գաղղիէ ընկն կը խօսուի: — Պանդոկ մ'էր. մեծ շունչ մ'առի, վերուցի բեռս և ներս մտայ երկշտութեամբ, քաղաք մտնող շինականի

կերպարանքով: Խոժոռ բնաւորութեամբ կին մի, որ տիրուհին էր, լսելով իմ առաջին խօսքերս՝ կանչեց սենեկապանը, որուն հարցուցի թէ արդեօք սենեակ մի կը գտնուի ինձ համար: Սենեկապանն՝ ամէն մէկ գաղղիերէն բառին՝ ջղաց կծկում մ'ունենալով՝ որ կարծես կերածը զուրս տալու ճիգ մ'էր, և զիտելով զիս ոտքէս մինչև գլուխ՝ կերպարանքով մի ընդ մէջ կարեկցութեան և կասկածի, որ յատուկ է իւր ազգին, պատասխանեց ինձ՝ թէ այո՛, կայր սենեակ մի, բայց... բայց — աւելցուց — հինգ շիւրիկ կ'արժէ, — և դարձեալ կասկածոտ գէմքով մի զիտեց զիս ոտքէս մինչև գլուխս: Յիրաւի զգեստներս այնպիսի վիճակի մէջ էին՝ որ իրաւունք ունէր կասկածելու: Եւ սակայն միլիոնաւորի մի վայրոյթը զգացի, ստերլին ոսկի մի նետեցի սեղանին վրայ, և այնպիսի շարժումով մ'ընելով՝ որ նոյն պահուն Դանտէի տողի մի արժանի երեցաւ ինձ, ըսի. — Վճարեցէք և երթանք: — Տարաւ զիս սենեակը: Խսկոյն անկողին մը տայ. բայց երկար ժամանակ չկրցայ աչքս զոցել, այնչափ սաստիկ էր ականջս հասնող ազմուկն: Խուլ և միօրինակ շառաչ մ'էր՝ իբր թէ տանը զիմաց աշէկոծեալ ծովը մուրն

չէր, և այս ազմուկին հետ՝ պայթիւն մի սուր աղաղակներու՝ որ կարծես ամենահեռու տեղերէ կը հասնէին, և հաղաբար տարօրինակ իրեր խորհրդածել կու տային ինձ. իբր թէ քնոյ մէջ ընկղմած այն անսահման քաղաքէն հնչող խօսքերու ձայներ լինէին, կամ թէ տրտունջներ նորա անթիւ արուարձաններուն, անէճքներ այն խոնջ վաստակաբեկ սարսափելի քաղաքին, ամբաստանութեան և արդարացուման աղաղակներ, ինչպէս կը լսուին ալէկոծեալ ծովու սաստիկ մունչման միջոց: Կամաց կամաց զարեցան այն բարձր աղաղակներն, և միայն կը լսուէր միօրինակ շշնկոց մի. յետոյ նորէն կը լսուէին մերթընդ մերթ առաջին աղաղակներն, — Լոնդրայի նման քաղաք մի գծուարու կը քնանայ, — վերջը զարձեալ լռեցին ձայներն. վերջապէս քնացայ, և աշխարհիս ամենէն աւելի տարօրինակ երազները տեսայ:

Սուաւօտը, արևու ծագելէն շատ առաջ, դուրս ելայ և քայլերս ուղղեցի դէպ ի Տամիս: Լոնդրայի -- կամրջէն քանի մի քայլ հեռու էի, քաղաքին սրտին մէջ: Սակաւ ժողովուրդ կը տեսնուէր, խոր լուսթիւն մի կը տիրէր. երկինք գորշագոյն էր, ցուրտ կ'ընէր, թեթև մառախուղ մի կը սքօղէր բոլոր

իրերը՝ առանց ծածկելու զանոնք: Երագ քայլերով գնացի դէպ ի կամուրջը, գիտնալով թէ Լոնդրայի ամենէն աւելի ընդարձակ տեսութեան կէտն այն տեղ էր:

Կամրջին մէջտեղը հասնելով, դիտեցի շուրջը. յանկարծ ոտքէս մինչև պուխս վայրկենական սարսուռ մի զգացի, և կեցայ անշարժ:

Վայրկեան մի յետոյ մտացս առջև պատկերեցաւ Պարիս՝ զոր տեսեր էի Նոր-կամրջէն, և ինձ արտաքոյ կարգի փոքրիկ երեցաւ:

Յետոյ կոթնեցայ կամրջի յեմարանին, և գլխուն մէջ սակաւ մի կարգ գնել ուզող մարդու շեշտով ըսի. — Տեսնե՞նք:

Վարը, Տամիս գետն ամենալայն, մէկ կողմէն՝ անհամար նաւեր, միւս կողմէն՝ հսկայածև կամուրջներ. երկու եզերաց վրայ, կամրջին մօտը, ամուր և սև աներ հին զգեկաց նման, խոնած անկանոն կերպով, որոնք կախուած են ուղղակի ջրոյն վրայ: Քիչ մ'անդին, անհեղեղ շէնքերու մեծամեծ ամբարտակներ, երկաթուղոյ կայարանաց յատուկ կամարներով ընդարձակ ծածքեր, երկայն ուղիղ գծեր՝ ինչպէս անագին պատուարներու. և ասոնցմէ անդին, խառնիխուան կուտակութիւն մի խորտակուած շրջանակներու

և տարտամ կերպարանաց, որոնք հետզհետե երթալով կ'անօսրանան և թեթև մոխրագոյն աղօտ երանգներու կը փոխուին, մինչև որ ուրիշ բան չերևիր՝ բայց միայն մեծղի խառնակութիւն մի կիսանկարուց՝ ծխնելոյզներու, աշտարակներու, դմբեթներու և զանգակատանց ծայրերու. և դեռ աւելի անյրագոյն, խորհրդաւոր երևոյթք կարծես ուրիշ հեռաւոր քաղաքներու, որոնք չեն տեսնուիր՝ այլ կը գուշակուին միայն ամենաթեթև սղոցաձև գծէ մի, որ կը նկարուի գորշագոյն հորիզոնին վրայ : Յետոյ բոլոր մերձաւոր շէնքերուն, կամիջաց և եզերաց վրայ կը տեսնուի արուեստանոցի տխուր գոյն մի, հինցած քաղաքի կերպարանք մի. ուժոյ և յոյնածուծութեան գէմք մի, չգիտեմ որպիսի թանձր և սգաւոր բան մի, ինչպէս հրդեհէ ամայացեալ քաղաքի, — անագին և տխուր տեսարան մի :

Ինչպիսի տարօրինակ խաղեր կը խաղայ մեզի ըզեղինս : Այս տեսարաններուս առջև, որոնք պէտք էին՝ գէթ առաջին անգամ՝ բոլորովին զրաւել զմեզ, յանկարծ մտքով հազարաւոր մղոն հեռու կ'երթանք՝ ոչինչ բաներու ետևէ, որ ամենևին վերաբերութիւն չունին տեսածնուս հետ, և որոնց վրայ պիտի չուզէինք

մտածել մեր սովորական կենաց մէջ : Առաջին անգամ կը տեսնէի ես Լոնդրա քաղաքը, և կը մտածէի վլոշտերի գրութեանց մէկ հատորին վրայ՝ զոր փոխ տուեր էի, և Տուրինէն մէկնելէս առաջ ետ չէի պահանջած :

Յետոյ մուտացայ զիրքը, և յաջորդաբար միտքս եկան, — ինչպէս կը պատահի սովորաբար անծանօթ քաղաքի մէջ, — հազարաւոր ներհակ պատկերներ՝ անձանց և իրաց, զորս սովոր էի երբեմն պատկերել մտքովս այն քաղաքին մէջ՝ իբր պատկերի յատակի մի վրայ. Գիկենսի վիպասանութեանց մի քանի մեծափոր վաճառականներ, Եղիսաբեթ թագուհին, մի անզղիացի ընտանիք՝ զոր տեսեր էի օր մի Գիլբերտեայ զրանց առջև ի Փլուրենտիա, անգամ մի հօրս ըրած ձեռ՝ ըսելով — Ինչեր չէի ըներ Լոնդրա տեսնելու համար, — և Գարրիկ զերասանին լուսանկարը, զոր մի պատկերազարդ լրագրի մէջ տեսեր էի :

Յետոյ զարձեալ անբացատրելի ցում մի մտաց, ինչպէս օրինակ իմն՝ զգալ թէ մօրուքս երկնցեր էր, և հարցնել ինքնիրենս՝ թէ ո՞ւր պիտի ընեմ նախաճաշս :

Ապա սաստիկ զգացում մի ափշութեան հոն գտնուելուս համար, իբր թէ երկնքէն

իջած լինէի. և վայրկեան մի վերջը յան-
կարծակի սառնակերպ անտարբերութիւն մի,
իբր թէ միշտ հոն եղած լինէի. և յետոյ դար-
ձեալ առաջին վայրկեանին բուռն զարմանքը:
Յիրաւի ստոյգ է Ս. Օգոստինոսի ըսածն,
թէ բնաւ օգուտ չունի ճանապարհորդելն, քանի
որ աւելի զարմանալի են մեր գլխուն մէջ
պատահածներն՝ քան ինչ որ կրնայ տես-
նուիլ զուրք:

Անցայ կամուրջը, ձախակողմեան եզեր
վրայ բացուող հրապարակը հասայ, Ս. Պօ-
ղոս մայր եկեղեցին տանող փողոցներէն
մին դիմացս ելաւ. — լսիկ և ամայի էին.
աջակողմը վարձայ, և յետ երկու կամ երեք
վարձուածներու՝ ձկանց վաճառատեղին հա-
սայ՝ մի նեղ, խոնաւ, մութ փողոցի մէջ,
ուր այնքան կառքեր և բազմութիւն մարդկան
խոններ էին՝ որ շաղիւ անցնելու տեղ կար.
յառաջ գացի, հարիւնգ ձկան այնպիսի սաս-
տիկ հոտոյ մի մէջէն, որ մէկ քանի վայր-
կեան յետոյ կրնայի նախաճաշ ընել հայր
զգեսաներուս քսելով: Հոչակաւոր աշտարա-
կին քով հասայ, որ լոնդրայի Մարակոյն
է, չորս կողմը շրջան մ'ըրի՝ դիտելով կաս-
կածանօք անոր ձախող պատերը. և աճապա-
բանօք մտայ մրերակոցներու քաղաքին մէջ՝

ընդարձակ շրջան մ'ընելու դիտմամբ, որով
հարկ չլինէր վերջը նորէն գառնալու: Եր-
կայն, ծամածուռ փողոցներ, երկու կողմը
բարձր սևագոյն պարիսպներով, առանց դու-
րներու և առանց պատուհաններու, բանտի
պատերով. հարիւրաւոր քորձաւորաց խմբեր
անշարժ կեցած անկիւններու մէջ, ուրիշ խըմ-
բեր՝ որք լուրթեամբ կ'անհետանային մթին
փողոցներու մէջ. կէս ժամու չափ ուրիշ
բան չտեսայ: Յառաջ կ'երթայի այն միօրի-
նակ փողոցներէն՝ ինչպէս մի հին ամրոցի
զարձագարձ անցքերու միջէն, ձանձրացած
և մեղամազձոտ, առանց զիտնալու թէ ո՛ւր
պիտի ելնեմ: Կէս մի հասայ, յետ երկար
շրջաններու, ուր զգացի թէ ետ կը գտնայի.
հարկ եղաւ ուրիշ նոր երկայն շրջաններ ը-
նել՝ ուղիղ ճանապարհը գտնելու համար:
Սրբուհի—կատարինէի մրերակոցի առջևն
էի, երբ կը կարծէի թէ լոնդրայի մրերա-
կոցին ծայրը հասնելու մօտ էի, և միաքս
զրած էի մինչև Հնդկաստանի մրերակոցը
երթալ: Այնպիսի ճանապարհ մի բուններ էի,
որուն ծայրը չէի տեսներ, ալ կողմէն՝ փա-
կուած մրերակոցներու պատերէն, ձախ կող-
մէն՝ փոքրիկ տուններէ, որոնց մէջտեղ կը
գտնուէին ուրիշ նեղ և երկայն փողոցներ,

որոնց երկու կողմը կը բարձրանային զոր-
ծարանաց աշտարակներ, վաճառանոցներու
պատեր, ծխով սևցած անակներու շեղջեր. և
որչափ յառաջ կ'երթայի, չէի կարծեր բնաւ
թէ Լոնդրայէն կը հեռանամ, այլ մանաւանդ
կը համարէի թէ կեդրոնին կը մծտենամ:
Բայց սրունքներուս վրայ վստահացած, և
Պարիսու փորձէն սիրտ առած, ուր՝ ի մեծ
զարմանս բարեկամներուս՝ բնաւ կառք չէի
նստած, անկասկած կը շարունակէի հետի-
ոտս երթալ: Սակայն հասաւ վայրկեան մի՝
յորում հարկ համարեցայ գիտնալ թէ ո՛ւր
էի: Գործաւորաց խմբի մի քովէն անցնելով,
լսեցի որ մին գաղղիերէն կը խօսէր. կանդ
առի և հարցուցի թէ այն մծախի շէնքը ար-
դեօք Հնդկաստանի մերթաւանգն էր:

Նա՛ փոխանակ պատասխանի՛ կրկնեց հար-
ցումս. — Այն մծախի շէնքը արդեօք Հընդ-
կաստանի մերթաւանգն էր. — և այնպիսի
կերպով երեսոս նայեցաւ՝ իբր թէ ըսել ու-
զէր, թէ ես խենթ էի:

— Բայց է՞ թէ չէ՞:

— Բայց զուք, սիրեցեալ տէր իմ, —
պատասխանեց ինձ ծիծաղելով, — կ'երևի
թէ բնաւ գաղափար չունիք թէ ի՞նչ է Լոն-
դրա քաղաքն: Սա Լոնդրայի — մերթաւանգն է:

— Դե՛ռ Լոնդրայի — մերթաւանգը. բայց
կէս ժամ կ'ընէ որ անոր զրան առջևէն անցայ:

— Եւ այգու ի՞նչ ըսել կ'ուզէք. չէ՞ք գի-
տեր թէ Լոնդրայի — մերթաւանգի միայն ծխա-
խոտներու մասը մէկ անգղիացի մղոն երկայ-
նութիւն ունի:

— Ապա որչափ պէտք է դեռ Հնդկաս-
տանի մերթաւանգը հասնելու համար:

— Նաւակով թէ շոգեկառօք կ'ուզէք եր-
թալ:

— Ոտքով կ'ուզեմ երթալ:

Ոտքերուս նայեցաւ նա:

— Չե՛մ գիտեր... — պատասխանեց —
բայց կարծեմ թէ չորս կամ հինգ մղոն ճանա-
պարհ կայ:

— Այս չորս կամ հինգ մղոն տեղույ մէջ
ի՞նչ կայ:

— Կը գանուին սուններ, մերթաւանգներ,
շտեմարաններ, զործատուներ, արուեստա-
նոցներ:

— Առա՛նց ընդհատութեան:

— Այո՛, առանց ընդհատութեան:

— Արդեօք Հնդկաստանի մերթաւանգէն
ո՛ւր կ'երթըցուի:

— Հնդկաստանի մերթաւանգէն կ'երթըցուի
Արտաքիւն — մերթաւանգը:

— Արտաքին — մերասնոցը հասնելու համար սրչափ կայ :

— Գրեթէ ուրիշ հինգ մղոն ևս :

— Միշտ տուներո՞ւ և արուեստանոցներու միջէն :

— Այո՛, միշտ տուներու և արուեստանոցներու միջէն :

— Արտաքին — մերասնոցէն ո՞ւր կ'երթըցուի :

— Արտաքին — մերասնոցէն կ'երթըցուի մինչև Գրինուիչի զիմացը :

— Եւ սրչափ տեղ է :

— Երկու կամ երեք մղոն :

— Միշտ բնակութեանց միջէն :

— Այո՛, միշտ բնակութեանց միջէն :

— Գրինուիչէն ո՞ւր կ'երթըցուի :

— Գրինուիչէն կ'երթըցուի Արևելեան Հնդկաստանի վաճառարեւոյրեան մերասնոցը :

— Եւ սրչափ հեռու է :

— Գրեթէ ութ մղոն :

— Միշտ տուներո՞ւ և արուեստանոցներու միջէն :

— Այո՛, միշտ տուներու և արուեստանոցներու միջէն :

— Եւ յետո՞յ :

— Եւ յետոյ կը շարունակուի :

— Եւ ո՞ւր կը վերջանայ :

— Ո՞վ գիտէ :

Այս անգամ ես այլ նայեցայ ոտքերուս : Շնորհակալութեամբ զատուեցայ զործաւորէն, և շուարած զանպաղ քայլերով ես դարձայ, ըսելով ինքնիրենս. Ո՛հ, սրչափ խաբուեր եմ եղեր. և ես կը կարծէի սրունքներովս Լոնդրա գալ և արշաւանքներ ընել :

Գարձեալ անցայ ձկնարանէն, անցայ Լոնդրայի — կամրջի զիմացէն, և սկսայ երթալ զէպ ի քաղաքին կեդրոնը :

Երբոր հասայ ի Փլիտ — Ստրիտ, սկսեր էր արդէն մեծ շարժումն :

Այն ժամանակ տեսայ Լոնդրա :

Փողոցի երկու մայթերուն վրայ բազմութիւն մի կայր, այնչափ խիտ և հոծ՝ ինչպէս թատրոնի մի դրան առջև, ուր չէին տեսնուեր խմբակներ, ո՛չ իրարու հետ շաղակրատող անձինք, և ոչ ո՛ր և է մէկը՝ որ բարձրաձայն խօսէր կամ շարժումներ ընէր. ամէնքն այլ կ'երթային շտապով և լըուութեամբ, իւրաքանչիւր որ ջանալով ներս սպըրդիլ ամէն փոքրիկ ծակէ՝ որ կը բացուէր բազմութեան մէջ՝ իւր նախընթացէն յառաջ անցնելու համար, իրարու զարնուելով և զի-

րար հրեղով՝ առանց ետ դառնալու բնաւ : Ճիշդ փողոցին մէջտեղէն կ'անցնէր երկայն շարք մի հանրակառայ՝ բարկենդանի կառքերու պէս գոյնզգոյն ներկուած , որոց առաջակողմը կային նստարանաց աստիճաններ , որոնք վարէն պէպ ի վեր երթալով կ'ընդլայնէին և մարզիկը օդին մէջ կը բարձրացընէին հովահարի ձեռով . այնպէս որ՝ ամենէն ստորինները գրեթէ զետնի կը հաւասարէին , իսկ ամենաբարձր նստողաց գլուխներն աւանց առաջին յարկին կը հասնէին , և դուրս կը ցցուէին՝ իբր թէ օդին մէջ կախուած լինէին : Մէկ հանրակառքին և միւսոյն մէջտեղը , ինչպէս նաև անոնց երկու կողմերը , աննկարագրելի խառնակութիւն մի կառաց , սայլերու , երկանիւ թեթև կառքերու , վաշերու , թըրթրական և բեռնաբարձ սայլակներու , մեծամեծ կառաց , որոնք բոլոր վերէն վար ծածկուած են ծանուցադրերով հանդերձից ամէն ձեռով ջեռուցիչներու , երեք՝ հինգ՝ մինչև ութ հատ զիմացը , ոմանց ձիերը ցուկնին այլոց յետակողմը յեցուցած , միջնանիւք՝ որք իրարու կը շփուին , և գալարուն ճապատումներով կ'անհետանան աչքէ շարունակաբար . և յետոյ տասնեակ մի սայլերու խմբեր՝ որք իրար անցած մէկմէկու կը պատահին և ապա

կը զատուին զժուարութեամբ , որք կարծես ամէն վայրկեան պիտի գլորաւըկին և պիտի ջախջախին բոլորն այլ միասին , ինչպէս միակըտուր վիթխարի մեքենայ մի՝ որ սաստիկ բախմամբ կը քայքայուի : Ընդ մէջ կառաց և կառաց , սալարկներու երկայնութեամբ , կը տեսնուին ահագին ծանրութեանց ներքև կորաքամակ բեռնակիրք , աղայք՝ որք ձեռօք սայլակներ կը տանին , երկայն շարքեր մարզիկներու՝ ծանուցադրերու ստուար թուղթեր վզերնէն կախած . ամէնքն այլ կեանքերնին սպրեցնելու զբաղած : Իւրաքանչիւր անկիւնապարձին՝ իրաց և մարդիկներու այն յորպահոս հեղեղն կը զեղու լայն ջրանցներու մէջ , կ'ընդունի նորանոր հոսանքներ , կը ծաւալի և կանգ կ'առնու հրապարակաց և դաւթաց մէջ , կը թափանցէ փողոցաց և նրբանցից մէջ ու լրբապատոյտ առուներով՝ որք կը կորսուին տուներուն մէջ : Մինչ այսպէս յառաջ կ'երթամ , հոսանքէն մղուած , սրածայն սուլել մի կը լսեմ զլսուս վրայ . աչքս կը վերցընեմ և կը տեսնեմ երկաթուղոյ կառախումբ մի՝ որ կ'անցնի ուրիշ կամրջի մի վրայէն , որ փողոցին վրայ կը բարձրանայ օդուն մէջ : Հագիւ թէ կ'անցնի այն շոգեշարժ կառախումբն , ուրիշ սոյլ մ'այլ կը լսեմ միւս

կողմէն. և ահա ուրիշ կառախումբ մի ևս կը տեսնեմ, որ կողմնակի տուներու տանեաց վրայէն կը թռչի: Մի և նոյն վայրկենին, հակառակ կողմէն, գեանին վրայ բացուած ահագին պատառուածէ մի դուրս կը ժայթքէ ծխոյ ամպ մի. երրորդ կառախումբ մ'է ստոր-երկրեայ երկաթուղոյ, որ անցնելու միջոց վայրկեան մի բաց օդին հանդիպելով սու-լեւով կ'ողջունէ լոյսը: Կը հասնիմ վերջապէս լայն փողոցի մի ծայրը. կը տեսնեմ հեռուն Տամիս գետը, կամուրջները, և սոյն կամը-ջաց վրայ ուրիշ շոգեկառաց խմբեր, որոնք կամարաց ներքե իրարու ետև կը սուրան՝ կը փախչին և իրարու կը պատահին. շոգեհաւ-ներ՝ որք կ'անցնին ծոելով իրենց ծխնելոյզ-ները և կայմերը՝ նման հովէն թեքուած մե-ծամեծ ծառերու. երկայն շարքեր բեռնաբարձ նաւերու՝ զորս կը քաշեն—շոգեհաւք. լաս-տերու և թեթև նաւակաց խումբեր, և կա-մըրջաց պատնէշներուն երկայնութեամբ՝ մար-դկանց թափօրներ, որոնք հակառակ եզե-րաց վրայ կ'անյայտանան: Յառաջ երթալով, զիմացս կ'եղնեն ուրիշ փողոցներ՝ որոնց ծայրը չի տեսնուիր, և երկու կողմերը կը բարձրա-նան վիթխարի շէնքեր, որոնց միջէն կ'ան-ցնին ուրիշ մարդկային հեղեղներ: Եւ ամէն

կողմ տիրեր է շառաչն երկաթեայ կամըջաց, որք երկայն կառախմբերու ծանրութեան ներ-քեւ կը զլրդան. սոյլեր, ծխոյ բուռն ար-տաշնչութիւնք, տագնապալից փչմունք, գլխուս վերայ, սաքերուս ներքե, մծաս և հեռուն, գեանին վերայ, օդուն մէջ, ջրոյն վերայ. մեկ-նող և հասնող իրաց խուճապում մի, մրցում մի. անընդհատ շարունակութիւն մի փա-խուստներու, հանդիպմանց և հետապնդու-թեանց իրարու, հանդերձ աղմկալից շառաչով ճոնչիւններու, ճարճատումներու, բոմբիւն-ներու և սալից դրնդիւններու. մի մեծ պա-տերազմի իրարանցումն և հսկայ արուեստա-նոցի մի բարեկարգութիւնն. յետոյ երկնքի մթութիւնն, շէնքերու տխուր սևութիւնն, խուռն բազմութեան լուսթիւնն, զիմաց ծան-րութիւնն, որ չգիտեմ ինչպիսի խորհրդաւոր և ցաւազին երևոյթ մի կու տայ այդ բովան-դակ տեսարանին, իբր թէ այն անսահման շարժումն լինէր ճակատագրի անհրաժեշտ հարկ մի, և այն անսահման աշխատութիւնն՝ դատապարտութիւն մի: Յոգնած և ընդար-մացած՝ ինքզինքս դարեջրատուն մի ձգեցի, և խոր շունչ մի առնելով, — Ս,յս ի'նչ աշխարհ է, բսի ինքնիրենս, ի'նչպէս կարելի է ապրիլ այս կերպով:

Փոքր ինչ յետոյ, զարձեալ ճանապարհ ելայ և հասայ Տրափալգարի հրապարակը, որ օտարականներէն ամենէն աւելի յաճախեալ թաղին կեդրոնին մէջ է: Շատ գեղեցիկ երեցաւ ինձ այն բարձր սիւնն, որ մառախուղին մէջ ուղիղ վեր կը բռնէ քաջին Նելսոնի արձանը, և զարմացայ այն վիթխարի առիւծներուն վերայ՝ որոնք իրեն շուրջը պսակ կը կազմեն. բայց քառակուսի շրջապատն, թերևս Պարիսու Միաբանութեան Արապարակին (Place de la Concorde) հետ բաղդատելով, սպասածէս վար գտայ: Այն տեղ արևմտեան Լոնդրայի բոլոր հանրակառաց իրարու հանդիպելու կէտն է, ուստի կրնաք երևակայել նոյն տեղոյ ազմուկը և զլրդումը: Բաւական է ըսել, թէ չի կրցայ ծիծաղս բռնել, երբ յիշեցի մեր մեծ շարժումն ըսածը՝ Հոսլմայ Corso կոչուած զլխաւոր փողոցին մէջ, Տայեղոյի ճանապարհին մէջ ի Նէապոլիս և Գենովայի մի քանի փողոցներուն մէջ, որ նորա հետ համեմատելով ուրիշ բան չէ՝ բայց եթէ զիւրի մի հանդարտ երթևեկութիւնն աօնական օրուն մի մէջ: Բռնեցի Vithehall-ի մեծ ճանապարհը և զուրս ելայ խորհրդարանի պալատին հրապարակին վերայ, ուստի ուղղուեցայ զէս ի վեստմինստրի կամուրջը:

Այն տեղէն երեցածն ամենէն աւելի գեղեցիկ տեսարանն է Լոնդրայի, և կը գերազանցէ քան Սենայի կամըջաց բոլոր տեսարանները: Մէկ կողմը կը տեսնուի խորհրդարանի գոթական մեծ և փափուկ պալատն, անթիւ աշտարակիկներով պսակուած, և թագաւորաց և թագուհեաց հազարաւոր արձաններով զարդարուած, որմէ փոքր ինչ հեռու վեստմինստրի փառահեղ աբբայութեան աշտարակները կը բարձրանան: Միւս ափին վերայ, Անգղիոյ Պանթէոնն, Ս. Յակոբայ հիւանդանոցին ութ գոգտրիկ շէնքերն՝ կենդանի գոյներով նկարուած. գետին վերի կողմը՝ բաց և զուարթ հորիզոն մի: Նոյն կէտին մէջ կարծես թէ մի ուրիշ Լոնդրայի մէջ ես, չգիտեմ ինչպիսի հարուային քաղաքի զուարթ վեհութիւն մ'ունի վերան: Տամիս գետն, որուն վերայ սակաւ շոգենաբ և նաւակը կը տեսնուին, կ'անցնի լոսի մընջիկ այն հոյակապ շէնքին առջևէն՝ որ Անգղիոյ փառքը և զօրութիւնը կը ներկայացնէ, ինչպէս անթիւ զօրաց բանակ մի՝ որ կ'անցնի կարգաւ իւր իշխանին առջևէն. և այն պայծառ և հանդարտ ընդարձակութենէն կը տեսնուին հեռուն՝ խորութեան մէջ, իբր քօղի մի ներքևէն, սեցած և խառնիխառն

չէնքերը, անհամար բազմութեամբ խոկած կամուրջները, և թանձր ծուխն հին Լոնդրային՝ որ յուզման մէջ է և կ'աշխատի:

Առաջին անգամ դիտեցի, այն կամրջին վերայ կեցած, թէ Լոնդրայի մէջ երբ փողոցները փոքր ինչ կը ցետտաին, շատերն՝ ազնուականք անդամ՝ գեղջկաց նման կը հանդրիճեն իրենց սաբատները. նոյնպէս ուրիշ շատերը ծաղկանց գեղեցիկ փնջիկներ կը դնեն կոճակաց օղակներուն մէջ: Եւ կը խոստովանիմ, թէ չէի կրնար ծիծաղս բռնել, երբ կը տեսնէի, — ինչպէս տեսայ յաճախ, — մի և նոյն անձին վերայ՝ արտաբոյ կարգի լուրջ գէմք մի, ծաղկանց փնջիկը, և տաբատի հանդրիճումը:

Տամիսի ձախակողմը գտնալով, զլիսաւոր փողոցաց մէջ շրջագայեցի, ճարտար տեղացոյցը ձեռքս բռնած՝ առանց պէտք ունենալու ուրիշներուն բան հարցնելու:

Կարելի չէ՛ ըսել թէ Լոնդրայի փողոցներն ինչ ընդհանուր երևոյթ ունին: Ոչ մէկ քաղաք չի ներկայացներ այսպիսի անկանոն զանազանութիւն մի ձևերու, այսպիսի քմահաճոյ խառնուրդ մի, ուր կը տեսնես միասին գեղեցիկը, ագեղը, ճոխը, աղքատը, տխուրը, տարօրինակը, մեծը և սաղա-

կալին: Կը կարծես տեսնել՝ իւր ամբողջութեան մէջ՝ քեզի համար նոր քաղաք մի, բայց բաղկացած ուրիշ շատ մի քաղաքներէ, զորս արդէն տեսեր ես վաղուց, որոնց միօրինակ գոյն մի տուեր են՝ անոնց զանազան ծագումը ծածկելու համար: Ամենայն աշխարհաց և ամենայն ժամանակաց ճարտարապետութիւնք այն սեղ հաւաքուեր են, իրարու վերայ զրուած և իրարու հետ հիւսուած: Մի և նոյն փողոցին մէջ փոփոխակի կը յաջորդեն իրարու՝ արարական, բիւզանդական, գոթացին և յոյն-հոսովմական, և անգղիական այլևայլ տեսակներ. մի և նոյն շէնքն ունի սուր — աղեղնաւոր պատուհաններ և յունական կամարակապ սրահ, մուրիտանացի սիւնակներ և վերածնութեան կարիատիդներ, հնդիկ կռատան մի տանիքն և եգիպտական մեհենի մի որմեր: Ամէն անկեան մէջ կը տեսնես բան մի, որ կը փոխադրէ երևակայութիւնդ հազարաւոր մղոններ հեռու այն տեղէն՝ ուր կը գտնուիս: Տեղ մի աղօտ կերպով վենետիկը կը յիշեցընէ քեզ, այլուր Հոսովմայ տարտամ երևոյթ մ'է. աստ Սիվիլիա միտրդ կը բերէ, այն սեղ Կոլոնիա կը յիշես. փոքր ինչ հեռուն՝ Պարիսու մէկ փողոցին մէջ կը կար-

ծես ինքզինքդ : Այն ամէն կերպարաններն՝ զորս տեսեր ես ուրիշ տեղ, աստ ծուխէն և մառախուղէն սևացեալք, աւելի խիտաք և դաժանք կ'երևին, իրենց բնիկ երկրէն հեռու գանուելուն համար՝ տխրած կը թուին, և իբր տաղտկացած այն թանձր օդէն, այն շառաչէն և պարտասեցուցիչ կենաց սեպէնէն : Դարձեալ այն սեանց, զրանց կամ պատուհանաց վերայի եռանկիւնածև զարդուց, փոքրիկ աշտարակաց, կամարի մի վայրահակ մաստանց, բարձրաբանդակաց, զարդարանաց և հոյակապ ձևերու չափազանց շուայլութիւնն՝ արուեստակեալ կ'երևի և կը յողնեցնէ ըզմարդ : Այն բովանդակ արուեստն զուրսէն բերուած իրի մի երևոյթն ունի, որ կարծես անյարմար է այն տեղ : Չափազանց զեղում մ'է այն, վատնում մի ճոխութեանց և շուայլ պերճութեան, երևնալու ճիգ մի : Կը տեսնուի հարուստ քաղաքն՝ որ ոսկոյ ծանրութեամբ գներ է իւր զեղեցկութիւնը. նորէն գործը կարգի գրած և սքնագարդ վաճառական տիկնոջ մի տպաւորութիւնը կ'ընէ վերագ :

Իշխանական պալատներով զարդարուած այս փողոցներուն հակապատկերը կը կազմեն ուրիշ երկայն փողոցներ, որոնց երկու կողմը կը գանուին անթիւ տուններ, բոլորն այլ մէկ

գունով, մէկ բարձրութեամբ և մէկ ձևով, որոնց տանիքները պատերուն ետև ծածկուած են, այնպէս որ՝ վրանին բաց կ'երևին, առանց պաշտպանութեան, առանց վանդակափեղկերու, ամրոցաց պարիսպներու պէս մերկ. — ուրիշ փողոցաց մէջ՝ ծխնեղուղից խողովակի նման սեցած, ճերմակ երիզովք շրջապատուած դռներով և պատուհաններով, որոնք վիթխարի զագազակիբ բեմերու երևոյթը կու տան անոնց. ուրիշ կողմեր՝ կը տեսնուին մութ կարմրագոյն և կաշուն զեղնորակ տուններ, որք կարծես մրով և կաւով շինուած են. և մղսներով յառաջ կ'երթաս միշտ այսպիսի գոյներու և պատերու միջէն, առանց բնաւ շէնքի մի պատահելու՝ որ այն մեղամաղձիկ միօրինակութիւնը կտարէ, կամ տան մի՝ որ յիշեցնէ քեզ ճոխ և շքեղ քաղաքը :

Քայց, ընդհակառակն, ազնուական թաղերու ճոխութիւնն և շքեղութիւնն կ'ափշեցընեն զմարդ : Ամէն մէկ քայլի զմանցը կ'երևնէ ահագին պալատ մի, հարթ քանդակներով և զրուազներով շուայլօրէն ճոխացած, զոր արբունի ապարանքը կը կարծես. մինչդեռ նա երկաթուղոյ կայարան մ'է, պանդոկ մ'է, և կամ վաճառականական տուն

մ'է: Ամբողջ փողոցներ իրենց երկու կողմերը այսպիսի հոյակապ հսկայաձև շէնքեր ունին, յորոց իւրաքանչիւրն՝ իրեն կից պալատին հակառակ ծայրէն գիտուելով՝ շատ հեռու կը տեսնուի, և մատախուղի միջէն կ'երեցընէ տարտամօրէն իւր սևագոյն մեծատարած զանդուածը՝ ինչպէս շեշտակի կըտրուած վիթխարի ժայռ մի: Մեծդին կամ հոյակապն, որ ուրիշ քաղաքաց մէջ աստանդ յրուած է և պէտք ես փնտուել զայն, այս տեղ քու շուրջ կը պատէ. և այն՝ որ ուրիշ քաղաքի մէջ այնպիսի կ'երեի քեզ, երևակայութեամբ այս տեղ բերուելով, կը կորսուի անհնութեան մէջ: Կ'անցնիս պերճ և շքեղ թաղերու միջէն, կ'անցնիս պալատներու քաղաքէ մի, սյնքան լուիկ՝ որ անբնակ կը կարծես, — արուեստանոցներու քաղաք մի, յորում հազարաւոր աղմուկ և շառաչ կը լսես՝ առանց բնաւ մէկը տեսնելու. և աստի կ'անցնիս ընդարձակ արուարձան մի, ուր անթիւ բազմութիւն ժողովրդեան կը վիտայ, և գրեթէ բնաւ ճիկ մ'անգամ չի լսուիր. և այս արուարձանէս ելնելով, կը մտնես դարձեալ պալատներու քաղաք մի: — Քաղաք չէ՛ այս՝ ուր կը թափառիս, այլ աշխարհ մ'է՛ ուր կը ճանապարհորդես:

F

Ո՞վ կարող է բացատրել այն հազարաւոր վայրկենական տպաւորութիւնները, զորս կ'ունենայ մարդ՝ երբ առանձին կը շրջագայէ Լոնդրայի նման մի քաղաքի մէջ: Զարմանք կը զգաս՝ իբր ոտոտտամամբ կամ ընդհատ ընդհատ, և յաճախ այն միջոցները ուրիշ զգացում չես ունենար՝ բայց միայն ձանձրոյթ և յոգնածութիւն: Ժամուան մի մէջ տասը անգամ կը հարցընես զու քեզի. — Մի՞թէ զուարճութիւն է այս: Այո է ճանապարհորդութեան վայելքն կամ զբօսանքն: — Մերթ յանկարծական սարսուռ մի կ'ունենաս, թէ մի գուցէ ճանապարհին մէջտեղ ինկնաս հիւանդացած, թէ գուցէ մէկը՝ ո՞ գիտէ ո՞վ՝ զպչի քեզի, և տանին զքեզ ո՞ գիտէ ո՞ր: Մերթ ընդ մերթ խորհրդաւոր նրմանութիւններ կը գտնես տեղեաց, պարագայից, անձանց, այնպէս որ՝ կարծես թէ ուրիշ անգամ ճիշդ նոյն տեղը գտնուեր ես, մի և նոյն ժամուան, մի և նոյն արևուտ լուսով, օդին մի և նոյն հոտով, հեռաւոր ժա-

մանակի մէջ: Երբեմն ուրախութիւն մի կը զգաս առանց պատճառի, յանկարծական սէր մի գտնուած աշխարհիդ՝ որով բոլոր անցողները բարեւէր աչօք կը զիտես, իբր թէ ամէնքն այլ բարեկամներդ լինէին: Ուրիշ վայրկեաններու մէջ, մի անձանօթի կասկածաւոր նայուածքն՝ կամ անշնորհ պատասխանն բոլորովին կերպարանափոխ կ'ընէ զքեզ, ամենայն ինչ սև կը ցուցընէ, և ատելի կ'երևցընէ այն երկիրը՝ ուր կը գտնուիս: Մի փոքրիկ երգեհոնի ողբական ձայնն, մի քանի մթին և բազմամարդ փողոցաց մէջ, մտածել կու տայ քեզ շփոթ կերպով՝ ոճիրներու և թշուառութեանց այն անթիւ գաղտնիքները, որոնք ծածկուած են այն մարգկային անթիւ մըջնոցներուն մէջ, և բուն փափաք մի կը զգաս զուրս ելնելու անտի, բաց օդին մէջ, մի մենաւոր գիւղի մէջ՝ զոր թերևս տասը տարի առաջ անցողակի տեսեր ես կառքի մի փոքրիկ պատուհանէն:

Մի անգամ, կայարանի մի մօտ գտնուելով, ուզեցի շրջաբայութիւն մ'ընել ստորերկրեայ երկաթուղեաւ: Երկու կամ երեք փողոց վար կ'իջնեմ, և ահա յանկարծ ցորեկէն գիշերուան մէջ կը խորասուզիմ: Ըյսեր, բազմութիւն մարդկան, աղմուկ, շոգեշարժ

կառախումբք՝ որք կը հասնին և որք կ'անհետանան մթութեան մէջ: Կը հասնի իմա՝ որով պիտի երթամ, կանգ կ'առնու, բազմութիւն մարդիկներու՝ որք վայր կը գահավիժին, և բազմութիւն մարդիկներու՝ որք շոգեկառաց մէջ կը նետուին. և մինչ կը հարցընեմ ես թէ ո՛ւր են երկրորդ կարգի օթեակներն, կառախումբն մեկներ է արդէն: — Այս ի՞նչ տեսակ բան է, կ'ըսեմ ես պաշտօնէից միոյն. — Մի շփոթիւր, կը պատասխանէ նա, ահա ուրիշ մ'այլ հասաւ: — Անդ կառախումբք չեն յաջորդեր, այլ իրարու ետէ կը վազեն: Կը հասնի միւս կառախումբն, վեր կը նետուիմ, և նետի պէս կը սուբայ՝ կ'երթայ: Այն պահուն բոլորովին նորօրինակ տեսարան մի կը սկսի: Կը վազենք քաղաքին հիմանց միջէն, անձանօթի մէջ: Նախ թանձր մթութեան մէջ կ'ընկղմինք, յետոյ վայրկեան մի կը տեսնուի ցորեկուան սկարլոյսը, վերջը զարձեայլ մթութեան մէջ, յորում աստ անդ լուսոյ տարօրինակ ցումնք կը փայլատակեն. յետոյ ակնթարթի մէջ երևցող և անհետացող կայարանի մի հազարաւոր լոյսերն. կառախումբք՝ որք կ'անցնին և չեն տեսնուիր, յանկարծական դադարում մի, սպասող բազմութեան մի հազարաւոր

դէմքերն՝ որք իբր հրդեհի մի ցոլացումէն լուսաւորուած են. յետոյ վարձեալ խլացուցիչ շառաչ մի զարնուող դանակաց, զանգակաց, մեքենայից փշումներու. վերջը ուրիշ մթութիւնք, ուրիշ կառախումբք, ուրիշ փայլփլումներ լուսոյ, ուրիշ լուսաւորուած կայարանք, ուրիշ բազմութիւնք մարդկանց՝ որք կ'անցնին, կը հասնին կամ կը հեռանան, մինչեւ որ կը հասնինք վերջին կայարանը. վայր կը ցաաքեմ, կառախումբն կ'անհետանայ. դէպ ի դուռը կը մղուիմ, սանդուղէն կէս մի ուրիշներէն վեր կը ասորուիմ, վերջապէս ցորեկուան լոյսը կը տեսնեմ...: Բայց ս'ըրեմ, ի՞նչ քաղաք է այս, ի՞նչպէս դուրս պիտի ելնեմ աստի: Կամայ: նախ գարեջրատուն մ'երթանք՝ քաղաքին յատակագիծը քննելու և անդեկանալու համար:

Յետ մանրամասն քննելու յատակագիծը, վերջապէս յաջողեցայ գտնել Բրիտանական քանդակարան (British Museum) երթալու ճանապարհը, որ Լոնդրայի միւս բոլոր թանգարաններէն աւելի կը շարժէր իմ հետաքրքրութիւնս: Շտապով անցայ քանդակագործութեան ընդարձակ սրահները, եւ զիպտական և ասորեստանեայ սրահները, և կանդ առի ձեռագրաց սրահին մէջ, զիտելու

համար Շէյխսպիրի տուն վարձելուն դաշնագիրը և Գրախոտ կորոշուեալին վաճառման պայմանագիրը, և ուրիշ անթիւ հարագատ ձեռագիրները՝ աշխարհիս ամենէն աւելի մեծ թագաւորաց և ամենէն աւելի հռչակաւոր արուեստագիտաց: Բայց քան զամէնն աւելի երկու ձեռագիրք միայն չափազանց կերպով զրաւեցին իմին ուշադրութիւնս, որոց վերայ բաւական ժամանակ սեւեռած մնաց աչքս: Երկու փոքրիկ թերթեր էին նոքա, յորոց միոյն վերայ գրուած էր գումար մի, և միւսոյն վերայ զձուած էին մի քանի բողորակներ, որոց մէկ մասը ուղիղ գծով շարուած էր մէջաեղը, իսկ միւս մասը անկեան մի մէջ զիգուած. և թէ՛ գումարը և թէ՛ բոլորակները սակաւիկ մի յուզուած ձեռքերէ շտապով գրուած կ'երևէին: Թանգարանի բազմութիւ թղթոց միջէն ապահովապէս ասոնք են, որոց վերայ գրուեցաւ և զձուեցաւ ամենահանդիսաւոր վայրկեաններու մէջ: Ո՞վ կարող էր տեսնել այն երկու մարդոց հոգոյն մէջ եղած զարհուրելի փոթորիկը նոյն պահուն, մինչ կը նշանակէին այն թիւերը և բոլորակները: Թիւերը կը ներկայացնեն անդ զիական բանակին զօրութիւնը, որոնք Վաստերոյի պատերազմէն սակաւ մի յառաջ

զրուեցան. իսկ բոլորակները կը ներկայա-
ցընեն անգղիական և գաղղիական նաւատոր-
միզները, որոնք Ապուքիբի պատերազմէն
փոքր ինչ յառաջ գծուեցան. զումարը՝ Վել-
լինգտոնին է, իսկ գծագրութիւնը՝ Նելսոնի :
Կային ձեռագիրք Գալիլէոսի, Նեւտոնի, Մի-
քայէլ-Սնգեղոսի, Փրանկլինի, Վաշինգտոնի,
Մոլլերի, Կարոլոս Հինգերոզի, մեծին
Պետրոսի, Գուբերի, Լուտերի, Տաստյի,
Կրոմուելի, և այլ անթիւք : Բայց ահա ուրիշ
տարօրինակ իր մ'այլ. մինչդեռ հիմակ չգիտեմ
թէ ինչ պիտի ապի՝ այն թղթերէն գէթ մին
աչացս առջև ունենալու համար, այն ժա-
մանակ՝ որ զանոնք տեսնելու համար բաւա-
կան էր միայն ծռիլը՝ հետաքրքրութեան և
սչ շուքը կը զգայի. և որ զեռ աւելի տար-
օրինակ է, կը նախատեսէի, և գրեթէ ապահով
էի՝ թէ պիտի չի ցաւէի զանոնք չի գիտե-
լուս վրայ : Մեզապրելով ինքզինքս՝ ես ինծի
կը հարցնէի. — Բայց ինչո՞ւ չես հետաքր-
քուիր. — և կը պատասխանէի. — Չգի-
տեմ. — և զուրս ելնելու սաստիկ կատաղու-
թիւն մի կը զգայի, և կը վազէի այն սրահ-
ներուն մէջ վայրենեաց յատուկ անտարբե-
րութեամբ մի առ այն բոլոր զանձերը, ու
բոց մէջ կարելի էր անցունել ամիս մի՝ ան-
ընդհատ վայելից և զուարճութեանց մէջ :

— Կը վձարե՞ս քե չէ՛ .

Թանգարանէն զուրս ելնելու միջոց լսեցի
այս խօսքերը (իմ բնիկ մայրենի լեզուովս)
անձանթի մի բերնէն՝ որ ներս մտնելու
վերայ էր : Ո՛վ մտնաքաղցր լեզու, ըսի ինքն-
իրենս, և կանգ առի զիտելու համար այն
անձանթը : Գործաւորի կերպարանք ունէր,
և կը խօսակցէր կնոջ մի հետ՝ որ իրեն
ամուսինը կ'երևար : Տեսնելով թէ իրեն
զարձեր կը նայիմ, ինքն այլ ինծի պարձաւ.
և երբ ժպտիլս յանկարծ իրեն աչքին զի-
պաւ, — տեսէք իրին զարմանալի ելքը,
— փոխանակ հասկնալու՝ թէ իւր մէկ հայ-
րենակիցն էի ես՝ Լինկոլնի մեծ ծովուն մէջ
կորուած, թէ իւր «կը վձարե՞ս քե չէ» խօսքն
զուարթացուցեր էր իմ սիրտս, և թէ —
եթէ համարձակէի — հաճոյքով մի պիտի
հրակիրէի զինքը ինծի հետ ճաշելու, չգի-
տեմ՝ ինչ խեղքը փշեր էր կարծելու՝ իբր
թէ չար գիտաւորութեամբ կը նայէի ես իւր
կնոջը, և իմ անոյշ նայուածքիս պատաս-
խանեց կատաղի և սպառնալից նայուածքով
մի. և տեսնելով թէ կը շարունակեմ ես
նայիլ, քայլ մի յառաջ եկա :

— Ապերանխտ լոմբարպացի, — մրմա-
ցի ես մեզմով՝ յառաջ տանելով ճանապարհս

տխրութեամբ, — դու սրախ սլաքի հա-
րուած մի տախր. բայց գնա՛, քեզ կը նե-
րեմ՝ ես ի սէր հասարակաց մօրը :

Երեկոյէն առաջ, ուզեցի ուրիշ շրջազա-
յութիւն մի ևս ընել օդային երկաթուղեաւ,
և երթուգարձի տոմսակ մ'առի քաղաքին ո՛
և է կէտի մի համար: Բոլորովին սարքեր
տեսակ զուարճութիւն մ'է այս, բայց ստոր-
երկրեայ շրջազայութեան հաւասար կենդանի
և հրապուրիչ: Կը վազենք տանիքներու
վերայէն, ծխոյ և ծիծեռանց աշխարհին մէջ,
ծինելոյցներու, խողովակաց, հողմացոյցերու,
լուսամուտներու, երգիքներու բարձրածայր
կատարներու անսահման անտառի մի միջէն.
Կը տեսնուին հազարաւոր փոքրիկ ծածուկ
խորշեր, որոնք անծանօթք են այն անհարթ,
քմահաճոյ, առանձնակճարտարապետութեանց,
և որ մեծատարած քաղաքին վերջին յարկին
վերայ կը բողբօջէ՝ իբր օդին մէջ կախուած
անհուն երկրի մի վայրենի բուսականու-
թիւնն. կ'երևին հազարաւոր փոքրիկ գաղտ-
նիքներ պատուհանիկներու, մարդկային որ-
ջերու, տանց վանդակներու՝ որ ընդ մէջ
երկնքի և երկրի կախուած կը թուին, և ու-
րոնց մէջ սակայն բազմաթիւ ընտանիքներ
կը բնակին՝ հանդերձ իրենց օդային պար-

տկրիկներով. կը տեսնուի վարը՝ ի խոր՝
փողոցներուն մէջ սև ամբօխը, որուն վերայէն
կ'անցնինք սուրալով՝ իբր հեղեղատի մի վերա-
յէն, հազիւ լսելով նոցա շառաչք. և չորս
բուրնիս կը պարզուի ընդարձակ տարածու-
թիւն մի՝ որ շատ հեռուն կ'երթայ, և մերթ
ընդ մերթ կ'երևին՝ Տամիս գետը, նաւա-
հանգստի նաւաց կայմերն, լայնածաւալ պար-
տէզներու կանաչութիւնն, արուարձանաց
գործատուններու աշտարակներն, և ամենայն
ինչ, բաց ի հիանալի տեսարանին սահման-
ներէն:

Գեռ սակաւ մի ճանապարհ կայր՝ զոր
պէտք էի հանրակառօք երթալ. շուտով ա-
ռաջին հանդիպածին տանիքին վերայ մագը-
ցեցի ելայ, որ տարաւ դիտ մինչև ծայրը,
և յետոյ վարձայ նոյն տեղը՝ ուստի մեկներ
էի: Նոյն ընթացքին միջոց յաճախ առիթ
ունեցայ զարմանալու այն չափազանց ըն-
տանութեան կամ համարձակութեան վերայ,
որով ինձ մօտիկ նստողներէն ո՛ր և է մէկը,
նստարանաց մէկ կողմէն միւսը անցնելու
համար, իմ ուստ իբր նեցուկ կը գործածէր,
իւր բոլոր ծանրութիւնը վերաս բեռնաւորելով,
և ձեռքը վերցնելու միջոց ուժգին ցնցում
մի տալով ինձ, ինչպէս մարմնամարզիկ մի՝

որ յետ ցատքելու չուանէն՝ մէկդի կը նետէ երկաթեայ ձողը: Առաջին անգամ ինձ այս ծառայութիւն ընողն, որ յանակնկալս և յանկարծակի պատահեցաւ, գրեթէ ջախջախեց զիս: Դարձայ իրեն, ինչպէս իրաւունք էր, որ զէթ իրմէ ժպիտ մ'ընդունիմ՝ իբր հատուցումն՝ որով ըսել ուզէր. — Ներեցէք: — Բայց ի՞նչ. կունակը ինձ դարձուցեր էր՝ առանց փայթ անգամ ընելու նայիլ՝ թէ որչափ երկայն էի: Տեսնելով թէ այս էր տեղւոյ սովորութիւնը, ամենայն զգուշութիւններ ի գործ կը դնէի այնուհետեւ, և ամէն անգամ որ կը տեսնէի թէ ինձ մօտիկ կեցողներէն մին ձեռքը կ'երկնցներ, ուս կը մօտեցնէի իրեն՝ ըսելով. — Հրամայեցէք. — և այսպէս՝ հաստատուն բռնելով մինչև որ անցնէր՝ աւելի նուազ կը զգայի ցնցումը: Բայց յետոյ, մի և նոյն հանրակառքին մէջ, այն բանին փոխարէն՝ շատ մեծ հաճոյք զգացի և զուարճացայ, երբ տեսայ թէ կարելի էր զուարճալի խօսակցութիւն մ'ընել՝ առանց իրարու լեզուն հասկնալու: Քոյս նստած երիտասարդ մի, որ շատ ուրախ կ'երևէր, սկսաւ հետո անդգիներէն խօսիլ: Ես պատասխանեցի գաղղիներէն. — Չեմ հասկնար: — Նա չիմացաւ թէ ես չեմ

հասկնար, և ծիծաղելով խօսակցութիւնը առաջ տարաւ: Գլխով նշան ըրի թէ՛ որչ, չեմ հասկնար, զուր տեղ մի՛ նեղուիր, շունչ մի՛ հատցըներ: Դէպքը այնպէս բերաւ՝ որ այն ո՛չը յարմար եկաւ ինձ ուղղած հարցմանը, և հետեաբար աւելի եռանդագին շարունակեց նա խօսակցութիւնը: Այն ժամանակ, տեսնելով թէ այնքան հաճոյք կը զգար խօսելով, ձեացուցի թէ յիշուի կը հասկընայի իւր խօսքերը, կէս ժպիտներ և անորոշ նշաններ ցուցնելով զէմբիս վերայ, որոնք որոշակի չէին կրնար շակտակիլ ինձի ըսած ոչ մէկ բանին: Յետոյ, ձանձրանալով այն դերը կատարելէն, մտածեցի որ՝ եթէ ինքը ինձի հետ այնպիսի լեզու մի կը խօսի՝ զոր ես չեմ հասկնար, ապա ուրեմն ես այլ կրնայի իրեն հետ այնպիսի լեզու մի խօսիլ՝ զոր ինքը չէր հասկնար, և սկսայ խօսելէն խօսիլ: Միջէն չեղնելիք խառնակութիւն մ'էր այն, իրարու միտք չէինք հասկնար. և սակայն ծիծաղեցաւ նա, ձեռքը ծնդիս վրայ զարկաւ, և հետաքրքրութեամբ սկսաւ ուշ դնել՝ իբր թէ եղանակ մի երգէի իրեն. յետոյ դարձեալ սկսաւ անդգիներէն խօսիլ, և այսպէս բաւական ժամանակ շարունակեցինք, երկու կողման այլ փոխադարձ գո-

հութեամբ, մինչև որ կանգ առաւ հանրա-
կառքն: Վար իջանք, ձեռքս տուաւ ժա-
մացուցակը Շոգեկուսայի ընկերութեան մի,
որուն կ'ենթադրեմ թէ գործակատար մ'էր
ինքը. և իրարու ձեռքը սեղմելով բաժ-
նուեցանք, նման երկու անձանց՝ որոնք օ-
րուան բոլոր խնդրոց վերայ ըստ ամենայնի
համառիւք և համաձայնք գտնուեր են իրարու:

Երեկոյեան քաջութիւն չունենալով մաղ-
ճոտութեան (spleen) դէմ դնելու, շուտով
պանդոկ գնացի զգուշութեան համար: Ո՛հ,
որչափ փափաքելի էր ինձ մէկը ունենալ
այն աեղ վարձքով, որ կենար և ուշ դնէր
ինձ որուն յօժարութեամբ կէս անգլիական
ոսկի պիտի սայի, այնչափ պէտք կը զգայի
շագակրատելու, յետ այնչափ իրեր տեսնելու
և չի կարենալու մէկն անգամ պատմել ու-
րիշին: Չգիտելով ուրիշ ինչ ընել, սկսայ
պատրաստել այն բաղադրութիւնները և
պատկերները, զորս պիտի գործածէի՝ սուսն
զաւնալով Լոնդրայի մեծութեան գաղափար
մի սալու համար. և որովհետև շատ օրերէ
ի վեր ուղեցոյց զբքեր միայն կը թերթէի
և հանդիպողին աեղեկութիւններ կը հար-
ցընէի, ուստի նիւթ չէր պակսեր ինծի:

Արդ զիտցեր, — կ'ըսէի աթոռակի մի՝

որ կ'ենթադրէի թէ մտերիմ բարեկամ լի-
նէր, — զիտցի թէ Լոնդրայի երկայնու-
թեան չափն է տասնուլեց մղոն, իսկ շըր-
ջապատն է երեսուն և հինգ. իսկ արուար-
ձանք՝ որք հետզհետէ կ'աւելնան անոր վերայ,
նոյնչափ ժողովուրդ ունին՝ որչափ Փլորեն-
տիա, ինչպէս է Գրինուիչ. կամ որչափ Հոլմ,՝
ինչպէս Քելտա. կամ որչափ Մարսիլիա,
ինչպէս Հաքնէյ: Թէ միայն Լոնդրայի մէջ
գտնուած ծառաներով՝ խաղաղութեան ժա-
մանակի խաշական բանակէն աւելի բազ-
մաթիւ բանակ մի կրնար կազմուիլ. թէ
գազի ճրագիկներով, որոնք քաղաքին տասը
հազար փողոցները կը լուսաւորեն, երկրիս
շրջապատին չորրորդ մասին հաւատար երկայն
փողոց մի կրնայ լուսաւորուիլ. և հաշուելով՝
թէ տասը լիար գարեջուր պէտք է գերմա-
նացի մի զինովցնելու համար, Լոնդրայի մէջ
սպառած տարեկան գարեջուր կարելի է երկու
անգամ գինովցնել՝ պատերազմի ժամանակ
ստրի վերայ եզոզ բոլոր գերմանական բա-
նակը. թէ Լոնդրայի մէջ տարեկան կերուած
սպանդանոցի անասունները ետևէ ետև կե-
ցընելով՝ կը կազմուի անընդհատ շարք մի, որ
բոլոր Եւրոպան կը կտրէ՝ ճիբբալատարի նե-
ղուցէն սկսելով մինչև Ռուսաստանի հիւ-

սիսային ծայրը . թէ Լոնդրայի մէջ տարեկան սպառած ոստրէները կը ծածկեն Պարիսու բուժանդակ Արիսեան դաշտը՝ ի միասին առած Յենայի կամուրջը և Տրոկադերոյի հրապարակը . և թէ, Լոնդրայի—կամրջին վրայէն կ'անցնին ամէն օր քսան հազար կառք :

Երկրորդ առաւօտը գնացի տեսնելու Բիւրեղեայ պալատը :

Գ

Փոքրիկ անցքն Վիկտորիայի կայարանէն մինչև Բիւրեղեայ պալատը՝ երկար ուղեւորութեան մի զանազան տեսարանները կը ներկայացնէ աչաց : Նախ և առաջ կ'անցնիս ուրիշ սաստիկ երազընթաց շոգեշարժ կառախուսքերու միջէն, որոնք կ'երթևեկեն լայն կամրջի մի վերայ, որ կարծես Տամիսի վերայ կախուած հրապարակ մ'է, յորում այնքան խիտ առ խիտ կը կարեն զիրար առնուահետք, որ բովանդակ միապաղաղ երկաթեայ մակերևոյթ մի կը ներկայանայ աչաց : Կ'անցնիս յետոյ Բաստերսէայի մեծ ցանգապատ պարտիզին քովէն : Յետոյ կը յաջորդէ շարք մի կայարաններու, ճեմելեաց

կամ գետնափոր ճանապարհներու, արուեստանոցներու՝ որոնք գործաւորաց հարիւրաւոր տուներով շրջապատեալք են, և քաղաքին մէջ իբր գիւղեր կը կազմեն . բոլոր տուներն այլ մի և նոյն ձևը և գոյնը ունին, իւրաքանչիւրն իւր փոքրիկ պարտէզով, և ամէն կողմ կը տեսնուին փոքրիկ մանկանց խումբիկներ : Յետոյ ուրիշ ընդարձակ պարտէզներ, վիթխարի շէնքերու անկատար կազմածներ, նախագիծք փոքրիկ քաղաքներու՝ որք մի քանի ամէն պիտի աւարտին և պիտի բնակուին, մթերանոցք, բուրաստանք, զվեակք, գերեզմանատունք, և սրչափ աչքի կը կտրէ, շինուածոյ նիւթոց մեծամեծ կոյտեր՝ որք գուշակել կու տան ապագային մէջ ուրիշ քաղաքներ : Փապուղեայ ներքև, բացօդեայ տանիքներու գերանաց վերայ, մինչև սանիքներուն ծայրը, ծառերուն վերայ, և փողոցին երկու եզերները, ամէն տեղ զարմանալի ծաւալում մի շատախօս ծանուցադրերու, որոնք իրարու հետ կը մրցին՝ սոճալաճառի մի վաճառողաց աղաղակներուն նման, և բովանդակ զաւտի մի մէջ տարածուող վաճառանոցի մի երեւակայական կերպարանքը կու տան տեղւոյն :

Հուսկ ապա բլրոյ մի գաղաթան վերայ կ'ե-

րևի Բիւրեղեայ սպառախն յաղթամարմին
զանգուածը , որ բոլոր կենտի վիճակին կամ
կոմսութեան կը ցուցընէ իւր թափանցիկ կա-
մարաց փափուկ շքեղութիւնը :

Ներսը , մէկ հատիկ անհուն սրահ մ'է ,
փոքրիկ աշխարհ մի : Առաջին տեսնելուն
մարդ բան չի հասկնար . գաւթէ մի կը մըա-
նեմ սրճանոց մի , սրճանոցէն վաճառանոց
մի , վաճառանոցէն ծաղկազուտնճ պարտէզ
մի , պարտէզէն թանգարանի մի մէջ : Նո-
ճեաց , զափնիններու , հալուէներու , արմա-
ւենեաց , և այրեցած գօտոյ բոլոր ուռճաւեա
և սաղարթաւից բուսոց մէջ կ'երկնցընեն ընձ-
ուզաք իրենց վիզերը , և Միքայէլ-Սնգե-
ղոսի արձանք կը բարձրացնեն իրենց գլուխ-
ները : Եզրպատական գաւթի մի սփինքսնե-
րուն մէջ , կը տեսնեմ հեքուն յունական
տուն մի՝ Լայոկոսնի խմբով և Միլեան Ասա-
ղիկով : Յունական տունէն կը մտնեմ հօուլ-
մէական տուն մի , ուսկից Ալհամբրայի խոր-
հրդաւոր փողբիկ սենեկաց խորերը կ'ընկղմի
մարդու աչքն , և Ալհամբրայէն կը տես-
նուի ներսը՝ Պոմպէայի տնակի մի գաւթին :
Պուրս եղնելով՝ կ'անցնիմ զիբրար խածատող
կատաղի առիւծներու և վագրերու խմբերու
միջէն , երկու կարգ արծիւներու և թութակ-

ներու մէջտեղէն , և առջևս կ'երնէ բիւզան-
զական գաւթի մի , յորմէ՝ կարչ կարչ զրանց
միջէն՝ կ'երևի միջնագարեան տան մի գա-
ւթին , վերածնութեան դարու պալատի մի
սրահն , և գոթացի եկեղեցոյ մի մատուռն :
Կը շարունակեմ ընթացքս մահարձաններու
և շիրմաց , աղբիւրներու , պատմական նկա-
րուք զարգարած զրանց , և արդի քանդա-
կագործութեան բոլոր հրաշալեաց միջէն , և
կը հասնիմ անթիւ մարդիկներու աճբոսի մի
մէջ՝ որ խոնած կեցեր է թատրոնի մի զրան
առջև , ուր « Trovatore » թատրերգութիւնը
կը ներկայացուր : Սակաւ մի անդին , մէկ
կողմը՝ կը տեսնուի երաժշտարան մի , ուր
կարող են կենալ երեք հազար երգիչք և
նուագածուք , կիսագմբէթի մի ներկէ՝ որ
Ս . Պաւղոսի մայր եկեղեցոյ գմբէթին երկու
լայնութիւնն ունի . իսկ հակառակ կողմը՝
թատերաբեմ մի կայ , ուր ուսուցիչ մի շա-
փագիտական ուսմանց դասախօսութիւն կ'ընէ :
Յետոյ կը յաջորդեն կարգաւ կատակերգու-
թեան թատրոնը , մթին սենեակներ , կըր-
կէսք . կը մտնեմ հովանոցներու և տաճա-
րաց ձևով շինուած ընդարձակ վաճառանոց-
ներու լաբիւրինթոսի մի մէջ , ուր բոլոր աշ-
խարհաց հնազէտ ճարտարութեան ամենէն

աւելի հրաշալի գործածներն ի ցոյց զրուած են, Գահիրէէն սկսեալ մինչև ի Բիրմինկամ և Պարիսէն մինչև ի Պեկին: Կ'անցնիմ մատենագրանաց սրահներէ, դաշնակներու, կառաց, կահ կարասեաց և ծաղկամաններու երկայն և անընդհատ շարքերու միջէն, և կ'երթամ կը կորսուիմ անտառի մի ծառերուն և քարայրներուն մէջ՝ ուր կը բնակին Ալիբիկէի և Ուլկիանիոյ վայրենիներն, սրոնք աստ անդ ցրուած են երէնք և զազաններ որսալու, կամ վաւարաններու չորս բոլորը հաւարուած են ընտանիքներով, և կամ քարերու ետև դարանք են՝ իբր թէ ուզէին զմեզ նետահար ընել: Յանկարծ սանդղի մի կը հանդիպիմ և վեր կ'ելնեմ. և ահա կը բացուին զիմացս գահլիճք և սրահք՝ սրոց ծայրը չի տեսնուիր, ուր կարելի է գնալ մղաններով՝ իւզանկար և ջրանկար պատկերաց, լուսանկարներու, և նշանաւոր մարդկանց կիսանդրիներու միջէն: Եւ ասոնց վերայ, ուրիշ գահլիճք և սրահք հազարաւոր զարձուածներով, ուսկից՝ զուրս նայելով՝ մէկ նայուածքով կ'ընդգրկէ մարդ կենտի կոմսութեան զեղեցիկ զաշտաւայրը. և զէպ ի վայր նայելով՝ այն բովանդակ երեակայական շրջանակը սրահներու, պարսէզներու, գաւթ-

ներու, թատրոններու, պանդոկներու. այն ամբոխ բազմութիւնը՝ որ կ'ելնէ, կ'իջնէ, կը խռնի թատերաց քով, կ'անյայտանայ պահ մի և կ'երևի զարձեալ բուսոց և արձանաց մէջ. և ձևերու, զոյներու, տեսարանաց այն հիանալի զանազանութեան վերայ, և աշխարհիս մանրանկարին վերայ՝ զոր կը ծածկէ զմբեթարդ բիւրեղեայ երկինք մի, արևուն լոյսը՝ որ ամէն կողմէ ներս կը հոսի ճառագայթարձակ, կապուտակ կամարներու և պատերու երկայնութեամբ՝ ծիածաններ, փայլակներ և արծաթի կայծերու ցայտուճներ սփռելով:

Լոնդրա դառնալուս միջոց այնպիսի զէպք մի պատահեցաւ, որ անդղիերէն չի գիտնալուս վերայ սաստիկ ցաւեցայ և մինչև անգամ լացի: Շոգեկառքին մէջ գտնուողներէն մին տեսայ որ կը ծխէր. ես այլ Պարիսէն հետս բերած վիրգինիա ծխազլանիկներէն վերջին մնացածը վառեցի: Հաղիւ թէ վառեր էի՝ երբ յանկարծ արկին մի ներս մտաւ. նշանացի հարցուցի թէ արդեօք ծուխը կը վնասէ իրեն. նա անդղիերէն պատասխանեց ինձ, բայց զիմաց արտայայտութեանէն այնպէս հասկըցայ՝ որպէս իէ բսել ուզէր. — Այո՛, կը

միաստ է ինձ : — Մահացուցման և անձնա-
նուիրութեան բոլոր ուժովս պատուհանէն
գուրս նետեցի ծխազլանիկը : Գեռ գեօին
ինկած չէր այն , երբ ծխող մարդն բռնելով
բազուկս՝ հասկցուց ինձ զազդիերէն , թէ
պատասխաններ էր տիկինն՝ որ մսևաշաւոյ թե-
կրեն ախորժեղի էր ծուխն : Երբ դարձայ
տեսայ պատուհանիկը , ձեռքս՝ որ զատարկ
էր , տիկինը՝ որ կը ծիծաղէր , այնպիսի մա-
րելիք մ' եկաւ վերաս՝ որ կարծես պիտի մեռ-
նէի :

Լոնդրա հասնելով՝ զնացի յարբայութիւնն
վիեսամինիստրի , Անգղիոյ Ս . Խաչ եկե-
ղեցին :

Ներս մտնելով մարդ՝ եթէ առանձին լի-
նի՝ պիտի խոնարհեցնէ ճակատը մինչև ի
յատակն :

Այն տեսակ Պանթէոն մի՛ անհուն ա-
պացոյց մ' է կճեայ՝ ի նպաստ անմահութեան
հոգոյ :

Հագիւ թէ ներս մտած , վեր կը բար-
ձրանան մարդու աչքերը՝ զիտելու կամարաց
սրանիին ամենաբարձր ազեղները , յետոյ կը
զառնան չորս կողմը պատող արձաններու
բազմութեան վերայ : Այնտեղ մեծամեծ մար-
դիկ խոնած՝ ճնշուած են , ճմլուած և պա-

հուրտած են : Հագիւ առաջին քայլերը կ'ը-
նես , զիմաց կ'երչեն Պիա , Պալմերստոն ,
Հոբերա Պիլ , որոնք լեզէնին արժանաւոր
առաջամարտիկներն են : Խորշի մի մէջ կայ
Յարութիւն Պաւլի : Մեծամեծ փառաց ար-
ձանք խառնուած են փոքրագոյն փառաց ար-
ձաններուն հետ , որոնք՝ փոխանակ նսե-
մացներու զանոնք՝ աւելի ևս կը փայլեցնեն :
Պանթէոն մ' է այն՝ զերազանց կերպով ուժ-
կալարական : Հոյակապ իշխանք կը ննջեն
մեծանուն քերթողաց կից : Շէյխսպիրի մտ-
կայ մանկավարժ մի՛ Անդրէաս Բէլլ . Նեւ-
տոնի քով՝ զրոշակիր մի . երկու մեծայաղթ
ծովակալաց մէջտեղ՝ Գարրիկ զերաստան , որ
շրթանց վերայ ժպիտով մի կ'երևի թատե-
րաբեմին վարագուրաց միջէն : Արքունի սե-
նեկապետաց , արքայից և քաղաքադէս բարձր
պաշտօնէից ամբոխի մի մէջ , որոց առջևէն
կ'անցնի մարդ անտարբեր և անզգայ , կը
պատահին սիրելի և փառահեղ պատկերներ ,
որոնք բարասել կու տան սրտի , իբր թէ
մի անձանօթ աշխարհի մէջ զանուած բարե-
կամներ լինէին . ինչպէս են , Գրէյ , Միլ-
տոն , Գոլլամիթ , Թոմսըն , Տակրէյ , Ազլի-
սըն , և վերջինն՝ ամենէն աւելի մեծամեծ-
ներուն հաւասար սիրելի և սգալի՝ Կարոլոս

Դիկէնս : Հոչակաւոր զօրապետաց մէջ, որոնք ծովը և ցամաքը արեամբ ներկեցին, կը փայլէ մարդութեան մեծամեծ բարերարաց պայծառ և անարատ փառքը, որոնք գերութեան ջնջուելուն առաքեալներն եղան, Հանուէյ մարգասէրն, Վինարինկամ բժիշկն, և Յակոբ Ուսա՝ դախն շոգեշարժ մեքենայի : Հանձարոյ շքեղափայլ մեծութեան քով անաչառ մեծութիւնն արդարակորով հոգոց, անընկճելի բարուց, համբերատար աշխատութեանց և անծանօթ զոհողութեանց մէջ սպառած երկար կեանքերու : Այլ սրշափ զանազան խորհրդածութիւնք այն քարէ հիանալի ասղնեգարժ և նկարակերտ դրուագներով զարդարուած մատուռներուն մէջ, ուր կը շրջի մարդ իշխանաց շիրիմներուն մէջ, արքունի եօթն ցեղերու արկածից և զօրութեան յիշատակներու մէջ : Եթէ այն բալոր արիւնը, զոր զաշոյնն կամ տապալն ցայտեցուցեր էր Հենրիկոս եօթներորդի և Եղուարդ Խոստովանողի շիրիմներուն մէջ տեղ թաղուած մարդկանց երակներէն, իսկոյն մէկ անդամէն փութը տաճարին մէջ, թիզ մ'անգամ մարմար անարատ և մաքուր պիտի չի մնար : Մարիամ Ստուարդ, Լորդ Ստափորա, ամուսինն Աննայի՝ դքսուհւոյն Սո-

մերսետի, գլխատուեցան . Թովմաս Տիւրմ, Այմեր Վաշենտացի՝ Պեմբրոկի կամն, Թովմաս Վուգասոկցի՝ Սալիսբըրիի զուքսն, Հոբբարտոս երկրորդ, Եղուարդ Ե և եղբայրն՝ Եորկի զուքսն՝ Եղուարդի դժբախտ որդիքն, Բուկինգամի զուքսն, Սպենսեր Պերսըլսլ՝ գանձարանի կամ երևմտից ատենադպիրն, սոքա բաւորն այլ սպանուեցան . իսկ Նիկողայոս Բազենալ՝ խանձարոց մէջ խեղճուեցաւ զայեկէն : Մատուռներուն մէջ շքեղեղէս վերջը, վայրկեան մի գտնելով՝ երբ պահապանն միւս կողմը դարձեր կը նայեր, Սկոտլանդի թագաւորաց հին աթոռին վերայ նստայ : յետոյ ձեռքով շօշափեցի այն քարը, որուն վերայ Յակոբ նահապետն հանգչեցուցեր էր գլուխը՝ երբ աստուածային տեսիլն երևցաւ իրեն :

Ո՛վ որ չէ տեսած անձրեւելը Լոնդրայի մէջ, Լոնդրա քաղաքը տեսած չէ . ես ունեցայ այս զուարճութիւնը այն առաւօտը՝ երբ գնացի Տամիսի ստորերկրեայ ձանապարհը տեսնելու : Այն միջոց հասկցայ՝ թէ ինչպէս այնպիսի օդով փորձութիւն կ'ունենայ մարդ ատրճանակով մի ինքզինքը սպաննելու : Տուները կը կաթկթեն, իբր թէ քր-

անէին. կարծես ջուրը միայն երկնքէն չի թափիր, այլ պատերէն ևս կը կաթի և գետնէն դուրս կ'ելնէ. տուներու մութ դոյներն աւելի ևս կը մթագնին և իւրային երևոյթ մի կ'առնուն. փողոցաց մուտք՝ քաւայրներու մուտքեր կը թուին. ամենայն ինչ աղտեղի, մաշած, բորբոսած և չարագուշակ կը թուի. մարդ չի գիտեր ո՞ր կողմը զարձանել աչքը, որ անախորժ բանի չի պատահի. յանկարծակի սարսուռներ կ'ունենայ մարդ, որոնք յարկարծահաս ձախողութեան մի յարձակելուն ազդեցութիւնը կ'ընեն. յոգնածութեան դառն զգացում մի կ'ունենայ, ամէն բանէ խորշում մի կը զգայ, անբացատրելի կամք մի փայլակի նման անհետանալու այս տաղակալի աշխարհէս:

Մինչ այս բաներս կը մտածէի, իբրք անհետացայ աշխարհէս՝ լուսաւորուած շրջանուոր սանդուխէ մի վայր իննելով, որ գետնին խորերը կ'երթայ, Տամիսի աջակողմեան եղերաց վերայ Լոնդրայի աշտարակին դիմացը: Ինչայ երկու մթադոյն պատերու մէջ, մինչև որ դիմացս ելաւ բուրակ բացուածն կամ բերանն երկաթեայ հսկայ խողովակին, որ կ'երերայ իբր մեծ աղիք մի գետոյն ա-

հագին փորին մէջ: Սոյն խողովակին ներքին կողմը կը նմանի ստորերկրեայ նեղ և երկայն սրահի, որուն ծայրը չի տեսնուիր: Լուսաւորուած է շարք մի անթիւ ճրագներէ, որոնք քողարկեալ ազօտ լոյս մի կ'արձակեն, նման գերեզմանական լապտերներու. ներսը մառախլապատ թանձր օդ մ'է. երկայն միջոցներ կը կտրէ մարդ առանց մէկուն հանդիպելու. պատերը կը կաթկըթեն պուրջայի մի կողերուն նման. տախտակամածն կը շարժի սափց ներքէ՝ ինչպէս նաւու մի յատակն. զիմացէն եկող մարդկանց քայլերն և ձայներն քարանձաւային բոմբիւն մի կ'արձակեն, և կը լսուին՝ մարդկանց տեսնուելէն առաջ, որոնք՝ հեռուէն՝ մեծամեծ ստուերներ կ'երեւին. և վերջապէս կայ այնտեղ չգիտեմ որպիսի խորհրդաւոր բան մի, որ առանց անհաբեկելու՝ սիրտը տարտամ անհանգստութեան մի մէջ կը ձգէ: Երբ մէջտեղը հասայ, ուր այլ ևս խորութիւն կամ միջոց չէր երեւեր ո՛չ այս կողմը և ո՛չ այն կողմը, և կը տիրէր գետնադամբանի լուծութիւն մի, և չէի գիտեր թէ դեռ ո՞րչափ ճանապարհ կար ընելիք, և մտածեցի թէ վարը ջրոյն մէջ եմ՝ գետոյն մութ խորութեան մէջ, ուր կը մեռնին անձնասպանք, և թէ

զլիոյս վերայէն կ'անցնէին շողեհաւք, և թէ որ յանկարծ ծակ մի բացուէր պատին մէջ, ժամանակ պիտի շունենայի հագիս Աստուծոյ յանձնելու, այն վայրկեանին, ո՛հ, ո՛րչափ գեղեցիկ երևցաւ ինձ արեգակն:

Գրեթէ կարծեմ մղոնի մի չափ ճանապարհ կտրեր էի, երբ հասայ Տամիսի ձախակողմը գտնուած հակառակ դուռը կամ բերանը, ուր ճիշդ առաջնոյն յար և նման սանդուխէ մի վեր ելայ, և գտայ ինքզինքս լոնդրայի աշտարակին առջևը:

Մարդկային թշուառութեան և անզթուութեան այն զգուելի յիշատակարաններն՝ հետաքրքրութենէ աւելի խորշում մ'ազգեցին վերաս. բայց յիշելով այն անձանց անունները՝ որոնք մեռեր են այն պատերուն մէջ, բռնադատուեցայ ներս մտնել: Հագիւ թէ անցայ առաջին շրջապատը, ահաւոր յիշատակներ խոնեցան մտացս մէջ: Դղեակն, հնգանկիւնաձև կառուցուած, ութ աշտարակներ ունի, յորոց իւրաքանչիւրն կը յիշեցընէ նշանաւոր բանտարկեալ մի և եղկելի մահ մի: Միոյն մէջ սպանուեցան Եզուարդ Դեօրվիքն, միւսոյն մէջ՝ Հենրիկոս Չ, և ահա ուրիշ երրորդ մ'այլ՝ յորում խեղդուեցաւ

կարասի մի մէջ կլարենտիայի դուքսն, Եզուարդ Ջե եղբայրն: Զանգակաց աշտարակին մէջ անցուց կենաց վերջին օրերը Աննա Բոլենա, իսկ աղիւսաց աշտարակին մէջ՝ Յոհաննա Գրէյ: Մի քանի քայլ ևս յառջ երթալով՝ գաղտնի տանջանաց հրապարակը հասայ, ուր տեղ՝ ուրիշ շատ սպանելոց մէջ՝ զլիստուեցաւ Յովհաննա Գրէյ: Մակաւիկ մի հեռու կը գտնուի այն փոքրիկ մատուռը, ուր թաղուած են Աննա Բոլենա, Հոորերտ Դըլլըրեւ, Կատարինէ Հուարդ, և այլք, որք գաղտուկ կերպով թունաւորուեցան կամ դաշունահար սպանուեցան և կամ խեղդուեցան: Դղեակն, արաքուստ մերկ և տխրագէմ, աւելի ևս տխրութեամբ համակուած է ներքուստ: Եեղ և ջախջախուած կամարներով սանդուխներ կը տանին մութ և տխուր մեծ սրահներու մէջ, կիսախաւար նեղ և երկայն անցքերու մէջ, շարագուշակ խցիկներու և այն բազմաթիւ կենդանի մարդկանց գերեզմաններուն մէջ, ուր այնքան թշուառք՝ յուսահատութենէ խելագարեալք՝ իրենց մագերը ցտեցին և գլուխնին պատերուն զարնելով ջախջախեցին: Մարդ սակաւ մի կը սթափի այդ տխուր մտածութիւններէն, երբ թաղաւորաց և իշխանաց շքեղ զէնքերը և զրահները

կը տեսնէ , որոնք գեանայարկ սրահներու մէջ հաւաքուած են . սակայն դարձեալ նոցա մէջ կ'ընկղմի , երբ կը տեսնէ այն զարհուրելի խաւարչուա զնդանը , ուր տասուերկու տարի տառապեցաւ վալտէր Ռալէյդ՝ Եղիսաբեթի մտերիմն , երբ կը տեսնէ տապարը , տակաւին արիւնթաթաւ կոճղը՝ ուր Սշտարակի բանտարկելոց հարիւրաւոր գլուխներ կտրուեցան , դեռ անվաստ մնացած գործիքները՝ որովք մարմինները կտոր կտոր կ'ընէին և ոսկրները կը փշրէին՝ առանց մեռցընելու : Ճիշք և աղաղակք , զորս մարդկային ստեղծուած մի՛ միայն կենաց հետ միասին կ'արձակէ , հառաչանք՝ որք սարսափ կ'ազդեն մարդուս , ձեք և շարժմունք , աղերսական խօսքեր՝ որք սիրա կը կեղեքեն , և գերմարդկային դիմադրութիւնք մարդոց՝ որք չեն ուզեր մեռնիլ . ահա ի՛նչ որ բուռն և սաստիկ կերպով կը զգայ և կը տեսնէ մարդ մտածութեամբ , երբ կը շրջի այն անիծեալ շէնքին նեղ և ծամածուռ անցքերուն մէջ :

Սուանձին սրահի մի մէջ , ապակեայ մեծ պահարանի մի ներքև , որ երկաթեայ ցանցով մի պաշտպանուած է , կը տեսնուի կոյս մի արքունի գաւազաններու , թագերու և

ապարանջաններու , որոնք ելեկտրական լուսոյ ճառագայթի նման մարդու աչքը կը շլացնեն . Անդդիոյ թագին ազամանդներն են , որոց ամենուն համագումարն կը հաւասարի եօթանասուն և հինգ միլիոն խտլական լիրայից :

Լոնդրայի աշտարակէն դուրս ելնելու՝ առաջին անգամ տեսայ գարեջրատան մի մէջ գիտոշտով զինուլցած մէկը : Զուտանք ազդեց վերաս : Զէի կրնար հաւատալ՝ թէ արբեցութիւնն այն աստիճան կարող էր կերպարանափոխ ընել զմարդ : Թերևս զուարճալի բան մ'է տեսնել մեր սովորական զինուլները , որոնք կամ չափէ դուրս կը զուարթանան կամ խոր քնոյ մէջ կ'ընկղմին , բաղդատութեամբ Լոնդրայի զինուլներուն՝ որոց գէմքն կ'այլանդակուի և կը կծկի , օրհասականի նման տոբոյն և տմոյն , հիւանդի և խենթի արտայայտութեամբ , աչքերը լայն բացած և սեւեռած՝ դիակի աչքերու նման : Եւ սակայն կը տեսնեմ որ դեռ այն եղիելիները , այն վիճակին հասած , անյագօրէն կ'ըմպեն այն զարհուրելի ըմպելիքը , որոնք անզգայացած գետին կը թաւալին՝ կայծակնահար եղած մարդիկներու նման , անվայել կերպով գլուխնին պատերուն և սեղան-

ներուն կը զարնեն, և բոլոր երեսներն կ'ա-
րիւնոտեն. իսկ ներկայ եղողները ծիծաղելով
կը զիտեն այն զգուելի տեսարանը :

Քայց արբեցողաց այն նողկալի տեսարա-
նին հակառակ, ինձ համար մեծ զուարճու-
թիւն և վայելք մ'էր՝ Լոնդրայի փողոցնե-
րուն և պարտիզաց մէջ անսնել մանուկները,
այն անզղիացի սիրուն մանուկները՝ որոնք
իրաւամբ հոշակուած են ամենուրեք, թէ
աշխարհիս ամենէն աւելի կայտառ և շնոր-
հալի մանուկներն են : Ստերլին լիբայի ու-
կեգոյնէն սկսեալ մինչև ամենէն աւելի պայ-
ծառ մետաքսի մոխրագոյն և եգիպտացորենի
հասկի թարմ թելերուն շէկ գոյնը, ամէն
բաղադրութեամբ շիկահեր զլուխներ կը տես-
նուին, որոց մազերն լայն լուսաւոր և ալե-
ձեւ կը ծածանին ուսոց վերայ, և փորձու-
թիւն կը բերեն մարդու՝ անցնելու միջոց՝
զոգունի կտրել մկրատով և առնուլ : Փոքրիկ
այտեր՝ որոնք վարդի գոյնին ամէն աստի-
ճանաւորութիւնները ունին, ծաղիկը պատող
տոբոյն սերկներէն սկսեալ մինչև այն փո-
քրիկ հեշտասէր թերթերը, որոնք սերմնա-
փակին հետ կը զուգաւորին. ծերանեգոյն
բերանիկներ՝ այնպէս որ կը զարմանայ մարդ՝

թէ ինչպէս թռչունները շեն կտցեր զանոնք.
երկնագոյն բիբեր և սպիտակ ամբձութիւն-
ներ, որոնք պէտք են ամաչեցընել Մուրիլ-
լոյի Անարատ Յղոշբեան շուրջը թռչտող
մանուկները : Եթէ չի գողցայ՝ հետս չի բերի
զրկաչափ մի այն մանուկներէն, այս է պատ-
ճառը՝ որ չգիտէի ո՛ր գնել զանոնք : Քայց
չի կրցայ ուրիշ փորձութեան մի գէմ գնել :
Օր մի, «Green-Park» ին մէջ, բռնելով ա-
նոնցմէ մին՝ որ քովէս կ'անցնէր, այնչափ
համբուրեցի զինքը՝ որ շունչը կտրեցաւ. և
յետոյ մանկածուկն դարձունելով զինքը՝ որ
վազեց ազատելու համար զտղայն՝ աղերսական
ձև մ'ըրի, իբր թէ ըսէի. — Ներեցէք ինձ,
պէտք կը զգայի այն բանին : — Մանուկներն
կը յիշեցընեն ինձ՝ Տիւսան տիկնոջ զիմա-
նկարուց հոշակաւոր ցուցահանդէսը : Ձի վըղ-
ջացի զայն տեսնելուս վերայ, սակայն աւելի
տիւր՝ բան թէ հաճոյսկան՝ տպաւորու-
թիւն մ'ըրաւ վերաս : Հագիւ ներս մտայ՝
զիմացս ելաւ Նապոլէոն Գէ զիսկն, անկողնի
վերայ տարածուած՝ մարաջախտի հանդիսաւոր
նշանազգեստով, այնչափ զարմանալի կերպով
նմանցուցած իրականին, որ մտտենալու խոր-
շում մի զգացի : Մինչ կը զիտէի զայն,
աչքիս ծայրով մէկը տեսայ քովս՝ որ ցա-

ւազին կու լայր. դարձայ և նայեցայ իրեն ուշադրութեամբ, և սարսափած ետ քաշուեցայ. Պիետրին էր -- մտէ շինուած -- բոլոր սև հագած, ուրուականի մի նման կանգուն կեցած խուռն բազմութեան մէջտեղ: Իշխանական մեծ սրահին մէջ, ուր կը գտնուէին հարիւրաւոր թագաւորք, թագուհիք, զօրավարք, Անգղիոյ և Սպանիոյ ամբողջ արքունիքներ, իրենց ժամանակաց շքեղ տարազներով, աւելի ազատօրէն շունչ առի և տուի: Արագոնայի թագաւորի մի շուրջը գտնուալով, թիւերի ցցունքին հանդիպեցայ. յետոյ Գուլիելմոս կայսեր և Փրեզերիկ կարոլոս իշխանին մէջտեղէն սահելով գնացի, և անցայ Յուլիոս Պալրի և Բիսմարկի առջև, որոնք մեկուսացած անկեան մի մէջ սաստիկ ջերմ կերպով կը վիճաբանէին իրերաց հետ: Կայծակի պէս անցայ այն սրահին միջէն, ուր ամփոփուած էին Անգղիոյ բոլոր նշանաւոր շարագործներն: Այն վայրագ ապուշներուն երեսներն, այն զգուշաւոր շարժումներն, այն արիւնթաթաւ զգեստներն, այն կէս մթութեան մէջ՝ որով չիմանար մարդ նոցա կեղծ կամ շինծու լինելը, սարսափ ազդեցին վերաս: Եթէ նոյն պահուն վարագուրի մ'ետեւէն ազգակ մ'արձակէր մէկը, պիտի կարծէի

թէ այն մարդասպաններէն մէկը զաշոյն մի մսեց նորա սիրտը:

Օր մի գնացի տեսնելու հոշակաւոր Դրամատունն Անգղիոյ, յորում կը գտնուին ինք հարիւր պաշտօնեայք, և որոց ամենուն կը հատուցանէ տարուէ տարի վեց միլիոնի թուշակ մի, և իւր արկղներուն մէջ ունի չորս հարիւր միլիոնի հարստութիւն՝ բոլոր ոսկի և արծաթ, և ապակափեղկի մի ներքև կը պահէ քսանըհինգ միլիոն արծող սոմոսակ մի: Մեծ սրահը մտայ՝ ուր կը լինին վճարմունք. հարիւր պաշտօնեայք՝ հարիւր փոքր պատուհանաց առջև կեցած՝ անպարարի երագութեամբ արծաթ և ոսկի կը բաժնեն պլանածև ծրարներով, արիւրով կամ թիակներով, և զբամատեարքն անապարանօք կը ընուն զբանները և քսակները, և զուրս կը փախչին զողերու նման՝ կասկածոտ աչօք իրենց բոլորտիքը նայելով: Պէտք է տեսնել յայտի փայլերը և ազօտ ցոլացումները, շրթանց և յօնքերու ամենաթեթեւ կծկումները, և մարդկանց երեսներուն հագար և մէկ արտայայտիչ՝ այլ անբացասելի շարժումները՝ ի տեսել ոսկւոյն: Պէտք է տեսնել թէ ի՞նչպէս այն ոսկին կը սահի, խոյս կու տայ, կը փայլի, և հնչիւն

ներ կ'արձակէ՝ որոնք ուրախութեան ծիծաղ-
ներ կը թուին, և ամէն տեսակ պշարանք և
քնքշանք ցոյց կու տայ՝ որ կարծես ոգևո-
րեալ և շարամիտ է: Ես իսկ՝ այն տեսա-
րանին առջև՝ առաջին անգամ եպերեղի
յուզում մի զգացի, և այնպիսի կերպարանք
մ'առի, որ եթէ մէկը տեսնէր զիս նոյն
պահուն՝ պիտի գոչէր անշուշտ. — Բռնե-
ցէք այդ մարդը: — Տասնևութ տարեկան
եղած միջոցս պիտի չունենայի նոյն զգացու-
մը. այն տարիքին հոգ չի ըներ մարդ հա-
րուստ չի լինելուն վերայ: Երիտասարդու-
թիւնն, ինչպէս կ'ըսէ մեծ բանաստեղծ մի,
խորհրդաւոր սպասել կամ յուսալ մ'է,
և հազար ու մէկ բաներուն հետ՝ որոց կը
սպասէ նա անորոշ և հեռուոր սպագային
մէջ՝ կը յուսայ նաև հարստանալ: Կը յու-
սայ դարձեալ անծանօթ ազգականներու
ժառանգութիւն մի ստանալ, և երեկոյ մի՝
թատրոնէն վերջը՝ գիշերային փոքրիկ սեղա-
նին վերայ դրուած զրամատան արժէթուղթեր
գտնել, զորս չի գիտեր թէ ո՞վ զրկեր է:
Բայց իւրաքանչիւր տարի որ կ'անցնի՝ մեր
ոսկի երազոց ցնորական խոստումներէն մէկ
մէկ բառ կը ջնջէ, և այն ժամանակ՝ ոսկոյն
տեսիլն մտածել կու տայ և մեղամաղձիկ փա-

փաքներ կ'արթնցընէ մեր սրտին մէջ. ո՛չ
թէ դատարկութեան սիրոյն համար, այլ այն
քաղցր ազատութեան՝ զոր կը խլէ մեզմէ
ամենօրեայ սոխոզական աշխատութիւնն. և
կարենալու համար՝ տասը տարի զբքի մի
վերայ աշխատիլ, տանը մէջ լեզուաց չորս ու-
սուցիչ բռնել, Ափրիկէի մէջ ուղևորութիւն
մ'ընել, և սիրոյն հետ միասին՝ կարմիր
յակնթեայ պսակ մի և կրանիտեայ պալատ
մի նուիրել:

Մի և նոյն օրը գնացի Բէրլիէյի հուշա-
կաւոր գարեջրատունը տեսնելու, որ տարե-
կան չորս միլիոն և կէս իտալական լիբայ
հարկ կը վճարէ տէրութեան, և սարուէ տարի
երեքհարիւր հազար հարիւրալիար գարի կը
սպասէ: Գարեջրատան գուռը գտնելու հա-
մար՝ Սութուարկի թաղին փողոցներուն մէջ
բաւական ժամանակ պտըտելէն յետոյ, հար-
ցուցի զայն ուրիշներուն, և մեծ զարմանքով
իմացայ՝ թէ արդէն իսկ գարեջրատան մէջ
կը գտնուէի, և թէ մինչև այն ժամանակ
նորա շրջապատին մէջ անցուղարձ կ'ընէի: —
Ապա Բէրլիէյի քաղաք կոչեցէք զայն,
— ըսի պահապանին՝ որ կ'ընկերէր ինձ:
Պաղարիւն անգղիացին քմծիծաղ մ'ըրաւ,
և երախտագիտութեան համար սկսաւ ման-

բամասն տեղեկութիւններ տալ ինձ, շրջեցրնելով զիս այն շէնքերուն անվերջանալի բաւիղներուն մէջ, փրփուրի լճերու բոլորախորթը, վիթխարի կարասներու և գարեջրոյ շառաչուն ջրվէժներու մէջ. և վերջապէս, երբ սրուններու համար սակաւ մի հանգիստ խնդրեցի, տարաւ զիս հանգչելու բարձր պատշգամի մի վերայ, ուսկից թեւը երկնցընելով — ինչպէս կ'ընէ զօրավար մի բանակին մէջ — սկսաւ ցուցընել ինձ այն ընդարձակածաւալ շրջանակը տուներու, շտեմարաններու, ձիաստաններու, համբարանոցներու և գաւիթներու, որք Բէրկէյի գարեջրատունը կը կազմեն. Սհաւասիկ, բսաւ նա գոռոզաբար, աշխարհիս ամենամեծ գարեջրատունն:

Մի և նոյն երեկոյն, Անդրկոյ դրամասան առջևէն անցնելով՝ տեսայ սակարանը, և փոքր ինչ կանգ առի այն զիրար կտրող փողոցաց բաւղին մէջ, ուր կ'եռայ Լոնդրայի մեծ առևտրական շարժումը. յետոյ, բոլորովին այն տեսարանով գրաւուած, տուն դարձայ՝ առևտրական գործոց ձեռք զարնելու և ճոխութեան գանձեր զիղելու սաստիկ մոլութեամբ մի յուզուած, զոր բնաւ չէի զգացած կենացս մէջ: — Գրելէն ի՞նչ

օգուտ, կ'ըսէի ինքնիրենս, պէտք է գործել և աշխատիլ: Այս ի՞նչ կեանք է՝ բաներ վաճառել և հոետորական կեանք մ'անցունել: Պէտք է ապահով և հաստատուն գործ մ'ընել: Փնօք Աստուծոյ, զեռ ժամանակ կայ: Եղեր են ուրիշներ՝ որոնք քան զիս շատ ուշ՝ վաճառականութեան սուեր են իրենք զիրենք, և յաջողեր են կարգաւորել իրենց բախտը: Իտալիա դառնալուս պէս՝ իսկոյն պիտի ջանամ, պիտի աշխատիմ, ո՞ր և է գործի մի ձեռք պիտի զարնեմ: Բարեկամներս պիտի չի ծիծաղին արվեօք վերաս: Թո՞ղ ծիծաղին. ես այլ պիտի ծիծաղիմ իրենց վերայ՝ երբ ամարանոց մի շինեմ ի Ֆիեզոլէ...: Բայց տեսնեք սակաւ մի, թէ ի՞նչ մասնաձիշող կրնամ փորձել: Պէտք է փոքրէն սկսիլ. Գինիներ, ըմպելիքներ... չեմ ըսեր, բամբակ...: — Նոյն վայրկենին կարծեցի տեսնել մի փոքրիկ սպիտակ մասն ինծի երկընցած, և լսել ծաղրածու ձայն մի՝ որ կը հարցնէր ինձ. — Գո՞ւ: — Այն ժամանակ ծիծաղեցայ և վաճառական լինելու զիտաւորութիւնը մտքէս հանեցի:

Հոնդրայի թանգարանները լաւ կերպով տեսնելու համար պէտք է հարուստ լինել, այսինքն է՝ կարենալ ամբողջ տարի մի հանգրտեամբ բնակիլ այն մեծ քաղաքին մէջ. ապա թէ ո՛չ, թանգարանաց այցելութիւնք կը դառնան կատարեալ զինուորական հասցեայ գնացքներ: Տակաւին կը կարծեմ վազել անվերջանալի սրահներու միջէն այն համաշխարհի վաճառանոցին, որ է՝ Սութ Կենսինգտոնի թանգարանն, յուսալով միշտ՝ երբ նոր սրահ մի կը մտնէի՝ թէ այն վերջինը լինէր, և միշտ թեւերս վար ձգելով յուսահատաբար՝ երբ հազիւ դուր հասած՝ կը տեսնէի ուրիշ շարք մ'այլ սրահներու: Մեծ բան է՝ եթէ յիշեմ Ռափայելի հռչակաւոր նախազիծքը, կամ Լարենսի զարմանալի Հաւկետ մի, որուն առջև երկար ժամանակ կանգ առի սրահի մի մէջ, այն սարսափելի առեղծուածը հասկանալու համար: Սակայն Տրափալզարի հրապարակին մէջ գտնուած նկարչութեան փոքրիկ թանգարանն չունի այս անպատեհութիւնը, և տակաւին աչացս առջև կենդանի

են Հոգարտի այն անմահ ամուսիներն, որուն համար նկարիչն երկու հազար իտալական լիրա ստացաւ, և Տիւրների լուսոյ երեակայական պատերազմներէն յետոյ՝ քսան անգամ աւելի թանկ գնով վաճառուեցաւ. Ռափայելի նըկարքն՝ որք քսանեհինգ տարի փնտռուեցան. և ուրիշ պատկերք Անգղիոյ չորս սիրելագոյն նկարչաց, որք են՝ Կորեճճիոյ, Պուստէն, Մուրիլլոյ և Կոլոլիոս լորենացի: Նոյնպիսի հասցեայ գնացքով այցելեցի նա եւ Հնդկաց, Ստանի և ծովային թանգարանները, վերաբուժային վարժարանը՝ ուր կը տեսնուի կրմախքն հռչակաւոր սիկիլիացի դաճած Կարոլինա Կրակամիի, որ կարող էր թաղուիլ գըլանաձև զլխարկի մի ներքև, և իրլանդացի հսկայ Պայրնի, որ փողոցաց միջէն անցնելու ժամանակ՝ առաջին յարկին մէջ բնակող մարդոց ծխափողը կը վառէր:

Քայց քան զամէն ազդեցութիւն աւելի անջնջելի պիտի մնայ մտացս մէջ՝ Հասարակաց կամ Համայնից Խորհրդարանին ըրած տպաւորութիւնն: Առանց գիտելու ներս մըտայ, — դատարկ էր. — զիտեցի, կրկին նայեցայ, և բնաւ մարխ ծայրէն անգամ չանցաւ՝ թէ Խորհրդարանն էր այն: Սրահ մի՛ ըստ երևութիւն՝ փոքրիկ, ազնուապետական

հոյակապ ճոխութեամբ նկարակերտ զարդարուած, որ շքեղ կանոնիկոսաց վայել մայրեկեղեցւոյ դասի մի գաղափարը կու տար, և որ սպիտակազգեստ և շիկահեր փոքրիկ կոմսուհեաց գումարման մի ամենայարմար տեղը պիտի լինէր: Երբ իմացայ թէ Համայնից Խորհրդարանն էր, — այն Խորհրդարանն՝ ուր կը հնչէ աշխարհիս ամենամեծ ճարտասանից պարզ և հանդարտ պերճախօսութիւնն, որ յետոյ արձագանգ կու տայ՝ պոռոտախօս վճիռներու և բռնազբօսիկ ճամարտակութեանց փոխուելով լատին Խորհրդարաններու մէջ, — պատկառանք մի ըզգացի. և առաջնորդէն հրաման առի մատանցս ծայրով դպչելու գաւազանին (the Mace), յուսալով թէ ինձ պիտի փոխանցէր անզղիական ազգին հանդարտ և վսեմ վիճարանութեանց զօրութիւնը:

Յետ յոգնեցուցիչ այցելութեանց թանգարաններու և պալատներու, կ'երթայի հանգչելու ծառատունկ ձեմելեաց մէջ, — Լոնդրայի բազմամարդ անապատին այն մեծ ու վասիաներուն մէջ, ուր մարդս հոգին կը գուարթանայ՝ երբ կը տեսնէ թէ աշխարհս բոլոր առն և երկաթուղի չէ. ուր հարիւրաւոր կանայք՝ գեղեցիկ ձիերու վերայ հեծած՝

կ'երթեկեն ծառուղեաց մէջ, որոց ծայրն չի տեսնուիր. և հազարաւոր փոքրիկ տղայք՝ բռնք խումբ խումբ կը վազվըզեն ընդարձակ մարգագետիններու վերայ և մեծամեծ լիճերու շուրջը, որոց վերայ կը սահին կ'երթան անթիւ մակոյկներ և նաւակիկներ. և սորա ամէնը մտածել կու տան հաճոյքով՝ թէ կեանքն բոլորովին տաժանումն և վաճառաշահութիւն չէ. ուր ծաղկած դաշարութիւնն, դիմաց զուարթութիւնն և իտալական երաժըշտութեան ներդաշնակութիւնն՝ գողարիկ և վառվռուն զգացմամբ մի կը կենդանացնէին մտացս մէջ սիրելի ծննդալայրիս պատկերը, զոր քիչօր վերջը պիտի տեսնէի դարձեալ: Ո՛վ Հայդը—Փարբ, Բիճենթ'ս—Փարբ, ո՛վ ձեմելիք Վիկտորիայի, Սորբ—Յակովբայ, Գրինուիչի, Սութուարկի, ո՛վ դարաստանք Բատերսէյի և Հոլանդայի, — իմ մեղամաղձիկ տխրութեանցս բարեւէր մխիթարիչք, — շնորհակալ եմ և կ'ողջունեմ զձեզ: Կը յիշեմ նաև երախտագէտ զգացմամբք՝ Ուինտսորի զգեկին բլրակը, Էտոնի պուրակները և անտառաիկները, Բիշմոնդի ձեմելիքները, Քիուի պարտէզները, և Լոնդրայի բոլոր շրջակայ գուարձալի գբօսալայքքը, ուր որ կ'երթայի ապաստանելու՝ կիրակէից և տօնական

օրերու սպանիչ ձանձրութենէն փախչելով: Ո՛հ,
այլ որ չէ տեսած զԼոնդրա կիւրակէ օր մի, չի
զիտեր նա թէ ի՞նչ է ձանձրութիւնն: Գըռ-
ներն գոցուած, պատուհանք ձողերով փա-
կուած, փողոցներն ամայացած, հրապարակ-
ներն լռիկ և անձայնք. ամբողջ թաղեր եւ
բեսի վերայ թողուած, ուր կարելի է սո-
վամահ լինել՝ առանց մէկէ մի տեսնուելու
և օգնութիւն գտնելու. անբնակ քաղաքի մը-
թիւն տիրութիւն մի. անսահման ձանձրոյթ
մի ամենայն իրաց վերայ, այնպէս որ սիրտի
ըսէիր՝ թէ արձանք կը նիրհեն և տուներն
անգամ տաղտուկ կը զգան. ուր այնպիսի լայն
և երկայն սաստիկ յօրանչներով կը բանայ
մտրոզ բերանը, որ իսկ և իսկ բնական ազդում
մի կ'ունենայ երեսը շօշափելու՝ գննելու
համար, թէ արդեօք տեղէն խախտած բան մի
կայ՞ ղէմքին վերայ:

Լոնդրա օրէ օր աւելի մեծ կ'երևէր ինձ:
Ի՞նչ ուղղութեամբ և որչափ որ քաշէի,
երբէք չէի յաջողեր՝ ո՛չ թէ միայն նորա
ծայրը տեսնել՝ այլ և ոչ տուներու նուա-
զութիւն, որ քաղաքին վերջանալուն նշան
մի լինէր: Ինչ ինչ կողմեր, երկրորդ ան-
գամ մի ևս անցնելով նոյն տեղերէն, Փլը-

րենտիոյ չափ մեծ քաղաքի մասեր կ'ելնէին
զիմացս, զորս առաջին անգամ չէի տեսած:
Ամէն օր, նոյն իսկ քաղաքին արևմտեան
ծայրը գտնուող թաղերուն մէջ՝ ուր գրեթէ
միշտ կը յաճախէի՝ յանկարծ կը բացուէր
առջեւ իբր զիւթութեամբ անձայր անհուն
փողոց մի, զոր տեղացոյց քարտիսին վերայ
անգամ չէի տեսած: Առաւօտը կանուխ կը
սկսէի արշաւանքս, նախորդ օրը քայած տե-
ղերէս կրկին անգամ կ'անցնէի, առանց զա-
նոնք ճանչնալու. ծառատունկ պարտէզ մի
կը հասնէի, ուր սակաւ մի հանգչելով՝ շունչ
և հոգի կ'առնուի. յետոյ դարձեալ կը մըտ-
նէի փողոցներու անվերջանալի լաբիւրինթոսին
մէջ, մերթ հետիտան, մերթ ձեւալընթացիկ և
երբեմն այլ երկանիւ թրթուսն կառքերով, ամէն
մէկ անկիւնադարձին ապշութեան բացագան-
չութիւն մ'ընելով, ինչպէս երբ լերան զա-
գաթը կ'ելնէ մէկն և ահա յանկարծակի նոր
աշխարհ մի կ'ելնէ զիմացը: Տակաւին զըլ-
խուս մէջ կը պտըտին հազարաւոր խառնի-
խուռն պատկերներ անբաւ բազմութեամբ լե-
ցուն գոհներու և փողոցաց կիցերու, մե-
ծամեծ ամայի միջոցներու և մտախլապատ
հեռաւորութեանց, զորս չգիտեմ Լոնդրայի
որ կողմը և որ օրը տեսեր եմ, — որք յաճախ

կը խառնուին և կը շփոթուին երազոց մէջ երեցած երեակայական քաղաքներու սեսիւններուն հետ :

Ընդորայի մեծութիւնն և հարստութիւնն ամէն վայրկեան տարբեր տպաւորութիւններ կ'ընէին վերաս : Մերթ ընդ մերթ խաւացւոյ անձնասիրութիւնս ճնշուած և նուաստացած կը զգայի իմ մէջս . կը յիշէի արհամարհանքով այն փոյուն մեծաբանութիւնները՝ զորս կ'ունենամք յաճախ մեր տուներուն մէջ, մենք զմեզ բաղապտելով միայն մեզի հետ . կ'առաջադրէի՝ յիտալիա դառնալու՝ հարուածել և ջախջախել զանոնք կծու հեզութիւններով . կ'ուզէի անդղխացի ծնած լինել , որ իրաւունք ունենայի բարձրէն նայելու լատինասեր սզգաց վերայ : Ուրիշ անգամներ՝ ընդ հակառակն , նոյն երկրին գերազանցութեան սեսիւն՝ ազնուական գործով խառն և եռանդուն խանդաղատանք և սէր մի զգալ կու տայր ինձ գէպ ի հայրենի աշխարհս : Մի՛թէ զաւակ մի , կը մտածէի ինքն իրենս , նուա՞գ պիտի սիրէ իրեն մայրը՝ աղքատ և հիւանդ լինելուն համար : Յաճախ և ո՛չ իսկ նախանձելի կ'երևէր ինձ այն մեծութիւնն , և կ'ըսէի . ունայնութիւն , ունայնութիւն :

Ի՞նչ նպատակ ունի , ինչպէս կը հարցընէ Լէոպարդիի հովին , այս անագին շարժումը , այս անսահման իրարանցումը մարդկանց և իրերու : Մի՛թէ քան զմեզ աւելի զո՞հ և երջանիկ են զոքս : — Հարստութիւն ունին : — Շատ լաւ . բայց մենք մտախիտը չունինք , և խեղճուկ մէկը թերևս արևուն մէջ աւելի կը վայելէ կեանքը՝ քան թէ հարուստ մի խաւարին մէջ : Եւ մի՛թէ այն տեղ չի կա՞ն թշուառութիւնք և անհուն ցուեր : — Երբեմն այս հէք իտալիան կը փայփայէր նոյն իսկ անձնասիրութիւնս : Երբ ճեպընթացիկ կառաց մէջ քաղաքավար ընկեր մի , իմանալով իմին խաւացի լինելս , կէս բարեսէր և կէս հետաքրքիր նայուածքով զիմացս վերայ բան մի կը փնտռէ՝ որ համապատասխանէր այն գեղեցիկ իրաց և զուարթ կենաց տարածմ պատկերին , զոր ամէն շաբաթականի մէջ կը զարթուցանէ իտալիոյ անուան , կենդանի հաճոյք մի կը զգայի , և հանդիպակաց պատուհանիկին ապաւոյն մէջ կը տեսնէի , որ աչերս կը փայլէին և երեսներս կը կարմրէին վարդագոյն :

Բայց որպիսի դաս մ'է համեստութեան այս ուղեորութիւնս : Ո՛րչափ անձուկ կը թուի

ճանապարհորդողին այն ծանօթութեանց և
զաղափարաց հորիզոնն, յորում կ'ապրի սո-
վորաբար, և սակայն իւր տան մէջ՝ իրեն
բարեկամաց և զբքերուն մէջ՝ այնչափ ընդ-
արձակ կ'երևի: Տեսնել թէ մեր « կըր-
թութեան գանձ » կոչածին կէտն անգամ,
զոր ուսմանց և զիտողութեանց այնչափ տարի-
ներու մէջ հազիւ կրցեր ենք հաւաքել, բնա-
ռչ մի արժէք չունի օտար երկրի մէջ՝ ուր
կը գտնուինք: Ըմբռնել և համողութիւն թէ
մեր տան մէջ, մինչ կը կարծէինք ընթեռ-
նուլ աշխարհիս մատեանը, իրօք միայն էջ
մի կարդացեր ենք, և թէ հազարաւոր իրեր՝
որք մեզի մեծք և կարևորք և աշխարհիս
կէսը լեցնելու արժանաւոր բաներ կ'երևէին,
ուրիշ բան չեն եղեր՝ բայց միայն տան խա-
ղալիկներ, և որոնք դռնէն քայլ մի դուրս
բաշտրովին ոչինչ են: Օտար երկրի մէջ ըրած
մեր ամէն մէկ քայլին՝ աչքերնուս առջև
ձեղք մի կը բացուի, ուսկից կը տեսնեմք
ի խորս մեր ազիտութեան անդունդները, և
կը լսեմք յատակէն կարեկցութեան քրքիջ
մի: Ընդհակառակն, կան նաև վայրկեաններ,
յորս գաղափարաց շարժումն այնչափ կ'երագէ
մեր մէջ, և ակնթարթի մի մէջ կը տեսնենք,
կը գուշակենք, կ'ըմբռնենք այնչափ իրեր՝

որք յառաջն մթին և անձանօթք էին մեզ,
որ եթէ մտաց այն տեսպային գործօնէութիւնն
կարենար այնպէս շարունակաբար տեսել, ար-
տաբոյ կարգի մարդիկ պիտի լինէինք: Ո՛ր-
քան մեծամեծ գաղափարներ և զիտումներ
կը ծնանին մտքերնուս մէջ այն ժամանակ,
որոնք սակայն յօլս կը ցնդին փողոցին առա-
ջին դարձուածին:

Յեա մեծութեանն և հարստութեան, Լոն-
դրայի մէջ ամէն բանէ աւելի զիս զարմա-
ցնողն եղաւ կարգաւորութիւնն: Այն ահագին
վիթխարի քաղաքն հռչանդացի գիւղակի մի
նման բարեկարգ և կանոնաւոր է, և որուն
համաձառալ կենաց գործողութիւնք ժամացուցի
ձշուութեամբ կը կատարուին: Ո՛ր և է օտա-
րական՝ որ հազիւ փոքր ինչ գաղղիներէն հա-
կանայ՝ կարող է առանձին միայնակ ազատ լի-
նել ամենայն մտատանջութենէ և առանց րոպէ
մ'իսկ կորսնցընելու: Պատերն և ձեպլնթաց
կառքերն, որոնք բոլոր ծածկուած են ծա-
նուցազրեթով, կ'առաջնորդեն իրեն անյրէպ
ամէն մէկ քայլին. դարձեալ, մարդ մ'այլ յան-
կարժ տպուած թերթ մի կը գնէ ձեռքը, որ
իրեն խորհուրդ մի կամ օգտակար տեղեկու-
թիւն մի կու տայ: Լոնդրայի ո՛ր և է կողմը որ

խոտորի մէկը, պէտք է տանիքներու վերա-
յէն անցող առաջին կառախմբին ուղղութեամբ
երթայ, և ահա անպատճառ կայարան մի կը
հասնի, որուն պատերն կ'ուսուցանեն իրեն
տուն դառնալու ճանապարհը: Օր մի ճեպըն-
թացիկ կառքի մի մէջ մտայ՝ առանց գիտելու
թէ ո՞ւր կ'երթար. Լսնորայէն դուրս տարաւ
զիս բաւական մղոն հեռու. վար իջայ գիւ-
ղական ճաշարանի մի քով, ուր մինակ մնա-
ցի: Այն տեղ գտնուողներէն և ո՛չ մին գաղ-
զիւրէն բառ մ'անգամ չէր հասկանար. հե-
տևաբար չի կարողացայ գիտել թէ ո՞ւր տեղ
էի, և թէ ե՞րբ պիտի անցնէր զարձեալ ճեպ-
ընթաց կառքն: Փոքր ինչ մտատանջութեան
մէջ ինկայ: Պարտեցայ գիւղակի մի մէջ.
բոլոր փայլուն անակներ և ողորկ պարտէ-
զիկներ, ուր միայն ազնուական պատանի մի
սեսայ ձի հեծած, և պատուհանաց ասպակի-
ներուն ետև օրիորդի շիկահեր գլուխ մի.
զերեզմանական լուծիւն մի տիրեր էր ա-
մէն կողմ: Ի՞նչ ընել. ո՞ւր երթալ: Յան-
կարժ սուշել մի լսեցի, որ սաստիկ յուզեց
սիրաս՝ ինչպէս բարեկամի մի ձայնն. այն
կողմը վազեցի և մէկ քառորդէն Լսնորա
հասայ:

Օտարականի համար՝ Լսնորայի մէջ երե-

կոյեան ժամերն շատ տխուր են: Սաստիկ
մաղձոտութեան վայրկեաններ ունեցայ: Պա-
րիսու այն մեծ սօնական շարժման և ծա-
ռազարդ փողոցաց երևակայական լուսաւորու-
թեան և շքեղութեան վարժած լինելով, Լսն-
որայի փողոցներն մութ և մեղամաղձիկ կ'ե-
րևէին ինձ: Կու լայի ես՝ յիշելով այն խուռն
բազմութեամբ լի սրճարանները, հոյակապ
կրպակները, և մինչև անգամ անհամեստ
նկարները Մոնմարտի ծառազարդ փողոցին,
մոռնալով այն իմ զգացած սաստիկ զայրոյթս՝
երբ կը տեսնէի քաղաքին ամէն կողմը ծա-
ւալած՝ լիտի, յաղթանակող և ակներև անա-
ռակութիւնը: Բայց ի՞նչ զաղանիք կայ այս
վհատութեանց, այս խոր տխրութեանց մէջ՝
որք յսճախ կը յարձակին մեր վերայ՝ մի
անձանթ քաղաքի մէջ, և այնչափ խոր և
սաստիկ են՝ որ երբեմն անցորդաց կարեկ-
ցութիւնը շարժելու չափ ցաւալի կերպարանք
մի կ'առնուէր: ... Բայց ի՞նչ է պատճառն,
— կը հարցնէ մարդ ինքն իրեն. — լաւ և
հանգիստ եմ, զրամ չի պակսիր ինձ, տունէն
աղէկ լուրեր կ'առնում, ազատ եմ, վաղը
առաւօտ պիտի զուարճանամ, տասը օրէն
հայրենի երկիրս պիտի գտնուամ. ապա ի՞նչ է
պատճառը՝ որ այդպէս անձնասպանի խոժո-

ուպէմ կերպարանք մ'ունիմ: — Ո՞ գիտէ: Գը— Մէստրի բորտին պէս, ես այլ՝ երբ կը աեսնէի ընտանիքներ, իրենց ազայոց՝ ստնտուին և նորածին մանկան հետ, որոնք կը շրջափայտին գոհ և ծիծաղկոտ դիմօք, դառն նախանձ մի կը զգայի սրտիս մէջ, և երեսս միւս կողմը կը դարձունէի:

Լոնդրայի մէջ յանձնարարութեամբ մի կառելի է հրաման առնուլ ընկերելու ոստիկանութեան գիշերային պահապաններուն՝ այն ազտեղի թաղերուն մէջ, ուր կը վխտայ ոճրագործներու և մուրսոյներու խումանն, և ներս մտնելու այն սրջերուն մէջ՝ ուր որ եղկելիներն սակաւ փողով կ'անցունեն ամբողջ գիշերը: Յարեկ միջոց պարտեցայ ես այն փողոցներուն և տուններուն մէջ, ուր ափիոնի արբեցողքն կ'երթան ընդարմանալու և խելագարելու, ուր անհամեսա պարեր կը խաղցուին, և որուն մուտքն է մէկ փող. ուր կռփամարտի (box) սիրողքն և հետաքրքիրը՝ կ'երթան տեսնելու այն անաւոր բռնցի հարուածները՝ որոնք աչքերը դուրս կը հանեն և առամները կը փչոնն. ուր կ'երթան կանայք՝ իրենց գինով ամուսիններէն ջախջախուած գանկերով, ուր հիւժած գաղրադործք

և արիւնշաղախ զողեր գիրկընդխառն կ'ողջագորեն զիրար, ուր անստակութիւնն կը սկսի մանկութեամբ և կը յարատեւ ծերութեամբ. ուր վայրագութիւնն, ցոփութիւնն և թշուառութիւնն փոփոխակի կը յաջորդեն իրարու խաւարին մէջ, իբր զգուելի հրէշներ, և կը միաբանին՝ զոհեր ուղարկելու Տամիս գետին, հիւանդանոցներուն և կախաղանին. ուր կ'եռան վերջապէս մեծ քաղաքին նողկալի աղանդութիւնք, և ուր կ'երթար կարողոս Գիկէնս գարեջուր ըմպելու իւր ծառային հետ:

Սմենէն աւելի գեղեցիկ առաւօտը՝ զոր անցուցի Լոնդրայի մէջ՝ վերջինն եղաւ, զոր համաշխարհիկ խխորժելի նախաճաշով մի կնքեցի՝ որուն նմանը բնաւ ըրած չէի: Վրէնի աշտարակին վերայ ելեր էի, — այն հռչակաւոր աշտարակին վերայ՝ որ չորս հարիւր վաթսուն փողոցներու և տասնըջորս հազար տուններու հրդեհ մի կը յիշեցնէ, — որուն ծայրէն մէկ նայուածքով կ'ընդգրկէ մարդ Լոնդրայի կամրջին և Տամիսի ձախակողմը վերջացող բոլոր փողոցներուն անաչին շարժումը: Գտայ վերը հինգ համակրելի երիտասարդներ, որոնք ուրախ զուարթ կը շողակրատէին, ծամածուլով գաղղիներէն լեզուն (ի բաց առեալ մին)

վարսալիրայի ծառայող մանչերու արագու-
թեամբ. ես այլ խօսակցութեան մէջ մտայ,
և յեա մի քանի բառերու՝ ի մեծ ուրախու-
թիւն ինձ՝ իմացայ թէ մին Կոլոնիացի էր,
միւսն՝ Մանչեստրէն, երրորդն՝ Հարլեմէն,
չորրորդը՝ Գուադալապեարայէն, և հինգերորդն՝
Լիոն քաղաքէն. այնպէս որ՝ զիս այլ մէջը
հաշուելով՝ վեց պետութիւններ կը ներ-
կայացընէր այն խումբն. Գերմանիա, Անգլիա,
Գաղղիա, Իտալիա, Սպանիա և Հոլանդա,
— երեք հիւսիսային և երեք լատինագարմ՝
ժողովուրդք, — չորս բարեկազմ միապե-
տութիւնք և երկու հիւսնոց հասարակապետու-
թիւնք: Ծիծաղեցանք այն զարմանալի զու-
գաղիպութեան վերայ, որովհետև գերմանա-
ցին և հոլանդացին ևս զիպուածով եկեր էին
այնտեղ մի քանի վայրկեան յառաջ. իսկ
միւս երեքն մի և նոյն կերպով հանգիպեր
և ծանօթացեր էին իրարու անմիջապէս նա-
խորդ օրը. և մենք մեզի՝ իբր յատուկ ըն-
տրութեամբ եղած՝ համազգային յանձնաժողո-
վոյ մի լուրջ կերպարանքը տալով, գնացինք
միասին նախաճաշ ընելու: Բաց ի սպա-
նիացւոյն, և սակաւ մի յիտալացւոյն, միւսներն
կատարեալ գարեջրոյ սպունգներ էին. իսկոյն
սեղանն ծածկուեցաւ դատարկ բաժակներով,

և խօսակցութիւնն ոգևորուեցաւ: Գարեջրոյ
զորոշիք թմրեցուցեր էին քաղաքական աստ-
լութիւնները և կուսակցական հոգին, և ընդ-
հակառակն վեցին մէջ այլ արթնցուցեր էին
միաբանական սիրոյ զգացումը, որով կը յա-
ջորդէին մէկմէկու շտապուն բարեմաղթու-
թիւնք՝ ի բարեբաստութիւն և ի փառս այն
բոլոր աղբաց՝ զորս կը ներկայացընէին նոքա,
— թէ և անարժանաբար, — ինչպէս կ'ըսէր Լիոն-
ցին այն զուարթ խօսակցութեան միջոց, որ
սակայն կարող էր օրինակ լինել աւերութեանց:
Գարեջրոյ ութերորդ շիշը պալէն յառաջ, Ալսազ
զաւառը արդէն ես զարձուեր էր, Հոովմայ
խնկոյն համար՝ պատերազմի երկիւղի ո՞ր և
է ստուեր ցրուեր էր, գաղղիական սահմա-
նապիտոյն վերայ ցրուած կարլոսեանք բռնուեր
և կապուեր էին, և Լիւքսամբուրգ բողոքովին
ապահովուած էր Գերմանիոյ պահանջումնե-
րէն: Յետոյ սկսան պարել սեղանոյն վերայ՝
Գուափեմբերգ, Կոստեր, Միքայէլ—Անգեղոս,
Մենզլա, Նեւտոն, Որանժի իշխանն, Վիլի-
սոր Հիւզոյ, և նոցա վերայ՝ աղանդերի յար-
մար և արբեցութեամբ սաստկացած՝ ածա-
կաններու տարափ մի. աստուածային, ան-
հուն, վսեմ, գերմարդկային, ևն: Յետոյ,
որչափ որ մտերմութիւնն կ'աճէր, իւրաքան-

չիւր որ իրենց անձնական գործերուն վերայ սկսան խօսիլ. — Ես վաճառական եմ, ես լրագրի խմբագիր եմ, ես նկարիչ եմ, ես ունիմ . . . այս ինչ բանը. և ամէն որ իւր ընկերոջ տարիքը կը հարցունէր, և կ'ըսէին իրարու. — Հրամանքդ գերմանացոյ գեղեցիկ տիպար մ'ես, և, Հրամանքդ այլ խաւացոյ գեղեցիկ տիպար մ'ես. և այսպէս մին միւսին լեզուն կը խեղաթիւրէր՝ կը սպաննէր, և մերթ ընդ մերթ կը լուռէր ձայն մի՛ որ կը գոչէր. — Բայց ի՞նչ կ'ընէք, չէք խմեր : — Եւ յետոյ, մեծամեծ դիտաւորութիւններ, խոստումներ և պայմաններ միտսին գանուելու յաջորդ տարին ի Պարիս, յԱմստերդամ, ի Պոլիս, այս ինչ փողոցը, այս ինչ օրը, այս ինչ ժամը. և — Հաւատա՛ անպատճառ պիտի գանուիմ ես, — Գրէ՛ հրամանքդ ինձի, — Համարձակ եղիր, քաշուելու բան չի կայ. — և յետոյ զեղուն բաժակներու վերջին ընդհարում մի, գոչելով ամենքնիս միաձայն. կեցցէ՛ քաղաքականութիւն :

Ճիշդ կէսօրը՝ Լոնդրայի աշտարակին մօտ՝ շողենաւ մտայ, որ կը մեկնէր զէս ի Անվերսա :

Լոնդրայի առասպելական մեծութիւնն չի

տեսնուիր ամբողջ՝ եթէ ոչ վեր ու վայր գալով և երթալով Տամիս գետին վերայ. Լոնդոն—Բրիճ և Սիթին կ'ոչնչանան նաւահանդատին բաղդատութեամբ, ամբողջ Լոնդրա քաղաքն կը փոքրկանայ :

Երբ մեկնեցաւ շողենաւն, արևն կը փայլփլէր և օդը մաքուր էր և պայծառ : Մտանք երկու շաբթ մեծ դի նաւերու մէջ, և սակաւ վայրկենից մէջ անցանք Սրբուհի Կատարինէի նաւակայքէն, որ բռներ է՝ ժամանակաւ տասն երկուհազար բնակչաց զբաւած տեղը, և կը ծառայէ իրր նաւահանգիստ այն նաւերուն՝ որոնք կու գան Գերմանիայէն, Ստորին Նահանգներէն, Գաղղիայէն և Սկովտիայէն. մեր ետևը թողուցինք այն Լոնդրայի ամբարանոցները, որք իրենց աւազաններուն մէջ ունին երեքհարիւր բարձրակող նաւեր, և իրենց ահաղին մթերանոցներուն մէջ երկու հարիւր հազար տակառաշափ վաճառքներ, և որոնք աշխարհիս ամէն երկիրներուն երեք հազար աշխատաւորաց գործ կը ձարեն. և երազաբար յառաջ գնայինք, անցնելով մօտէն նաւաձիգ շողենաւուց, առաջատանաւուց, մեծկակ նաւակներու, և ամէն ձևով նաւերուն՝ որոնք կ'երթևեկեն լայն և ընդարձակ գետին վերայ : Սակաւ մի ժամանակ տեսարանն կարգէ դուրս


բան մի չի ներկայացըներ: Ահազին շեղձակոյտեր, և անվերջանալի շարքեր պարկերու, տակառներու, վաճառքի ծրարներու, որոնք բռներ են բոլոր փողոցքը, թուփերը, կամուրջները և փողոցաց մուտքերը. անհուն երկայնութեամբ շրջապատ պարիսպներ, անթիւ սեցած տուններ, և ամէն կողմը գործատանց ծուխ, մեքենայից շարժում, և իրարանցում բազմազբազ գործաւորաց և նաւաստեաց. միւս բոլոր մեծամեծ նաւահանգստաց մէջ եղած շարժումներէն աւելի սաստիկ և այլակերպ է այս տեղի շարժումն: Բայց երբ կը հասնինք Տամիսի առաջին անկիւնադարձը, նոյն պահուն կը սկսինք գիտել՝ թէ քան զայն յառաջ երբեք այնչափ երկայն միջոց չէինք կտրած ընդ մէջ կարգ կարգ նաւերու. և երբ՝ հազիւ թէ դարձած՝ կը տեսնենք նոր ուղղութեան վերայ անհամար կայմեր և առագաստներ, որոնք վերջ չունին, չենք կրնար զարմանքնիս բռնել: Բայց զարմանքէն աւելի բան մի կը զգանք, երբ կ'իմանանք թէ այս կայմերէն և առագաստներէն անդրադոյն, երկու փականց երկայնութեամբ տարածուած բարձրաբերձ պարիսպներէն դուրս, կան ուրիշ հոծ և խիտ՝ խոր և խառնիխուռն նաւուց անտառներ. ի ձախակողմն՝ արևմտեան Հնդկաստանի նաւակայից ընդարձակ աւազաններն են, որք հարիւր եկասար տեղւոյ մակերևոյթը կը գրաւեն. յաջակողմն՝ հինգ մեծամեծ «վաճառականական» և Սըրբէյի նաւակայքն, որք մղաններով ցամաքին մէջ կ'երկըննան: Այլ ևս նաւաց կրկին շարքերու մէջ չենք նուեր, այլ երկու կարգ նաւահանգիստներու մէջ, և աչքն կարող չէ մէկ նայուածքով ընդգրկել այն ամբողջ տեսարանը: Յետ անցնելու «վաճառականական նաւակայք», մէկ երկու մղոն տեղ յառաջ կ'երթանք փոքր ամբարանոցներու մէջտեղէն. բայց միշտ նաւուց անտառներու, քաղաքաց չափ մեծ շտեմարանաց սեցած պատերու, և վաճառքներու լերանց միջէն: Կ'անցնինք Գրինուիչի փառահեղ հիւանդանոցի առջևէն, և կը դառնանք Շնակզզւոյն շարջը: Երկու ժամ կ'ընէ որ կը նաւենք, երթալով նաւերու թիւն կը նուագի, և թէպէտ շտեմարանք, գործարանք և տունք անընդհատ կը յաջորդեն իրարու երկու եզերաց վերայ, այլ թուի թէ նաւահանգիստն մօտ է վերջանալու: Շունչ կ'առնում, հանդչելու պէտք կը զգայի, յոգներ էի զարմանալէն: Այսպէս յառաջ կ'երթանք ժամ մ'այլ, յեշերով զլսնորա՝ իբր հեռուոր քաղաք մի, և նաւահանգստին շարժումը և

տանի նաւակայից ընդարձակ աւազաններն են, որք հարիւր եկասար տեղւոյ մակերևոյթը կը գրաւեն. յաջակողմն՝ հինգ մեծամեծ «վաճառականական» և Սըրբէյի նաւակայքն, որք մղաններով ցամաքին մէջ կ'երկըննան: Այլ ևս նաւաց կրկին շարքերու մէջ չենք նուեր, այլ երկու կարգ նաւահանգիստներու մէջ, և աչքն կարող չէ մէկ նայուածքով ընդգրկել այն ամբողջ տեսարանը: Յետ անցնելու «վաճառականական նաւակայք», մէկ երկու մղոն տեղ յառաջ կ'երթանք փոքր ամբարանոցներու մէջտեղէն. բայց միշտ նաւուց անտառներու, քաղաքաց չափ մեծ շտեմարանաց սեցած պատերու, և վաճառքներու լերանց միջէն: Կ'անցնինք Գրինուիչի փառահեղ հիւանդանոցի առջևէն, և կը դառնանք Շնակզզւոյն շարջը: Երկու ժամ կ'ընէ որ կը նաւենք, երթալով նաւերու թիւն կը նուագի, և թէպէտ շտեմարանք, գործարանք և տունք անընդհատ կը յաջորդեն իրարու երկու եզերաց վերայ, այլ թուի թէ նաւահանգիստն մօտ է վերջանալու: Շունչ կ'առնում, հանդչելու պէտք կը զգայի, յոգներ էի զարմանալէն: Այսպէս յառաջ կ'երթանք ժամ մ'այլ, յեշերով զլսնորա՝ իբր հեռուոր քաղաք մի, և նաւահանգստին շարժումը և

չառաչը՝ իբր նախորդ աւուր տեսարան մի . երբ անաշխանկարձ, զեռին ուրիշ նոր դարձուած մ'այլ հասնելով, կը տեսնեմ նորա նոր երկայն շարքեր նաւերու, նոր հեռաւոր անառաններ կայմերու և առաջատաց ձողերու, նոր վիթխարի ամբարանոցներ, ուրիշ նաւահանգիստ մի, ուրիշ մեծղի տեսարան մի : Սյուտեղ զարմանքս յափշուծիւն կը փոխուի և կը կարծեմ երազել : Այնպէս կը թուէր ինձ՝ թէ մի ուրիշ Լոնդրայի մէջ պիտի մտնենք : Այնպէս արևելեան Հնդկաստանի ամբարանոցներու և վիլուլիչի նաւարաններու մօտէն, վիկտորիայի ամբարանոցներուն երկայնութեամբ կ'երթանք, որոնք ձախակույմեան ափին երկայնքին վերայ կը տարածուին երեք մղոնի չափ . և այսպէս կը յառաջենք միշտ ընդ մէջ անվերջանալի պարիսպներու, անթիւ նաւերու, վաճառքներու, մեքենայից, ծխոյ, սոյլերու, անդուլ երթուկներու, աշխարհիս ամենայն ազգաց զրօշներու, անծանօթ լեզուաց բառերու՝ որոնք մօտակայ նաւերէն կը լսուին, տարօրինակ զգեստներու, վայրագ զոչումներու՝ որոնք երևակայութեանս առջև յանկարծոյն կը պատկերեն հեռաւոր ծովեր և ափունքներ : Եւ երեք ժամ կ'ընէ՝ որ կը տեսնէ սոյն տեսարանս : Զարմացման

զգայութիւնն՝ որչափ այլ յոգնած լինի, հարկ է դարձեալ սկսիլ զարմանալ : Մտաց խանդն կը վառի, այլ ևս չունենար մարդ այն նաւասացուցիչ զգացումը՝ զոր կը զգայր ի սկզբան, բաղբասելով այն աշխարհը իրեն հայրենի երկրին հետ . այնուհետև չի բազմատեր, զի աշխարհաբաղբացի կը համարի ինքզինքը . ազգային պարծենկոտութիւնն կը մեռնի մարդկային սնապարծութեան զգացման մէջ . այնուհետև ոչ թէ Լոնդրայի նաւահանգիստն է որ կը տեսնէ, այլ ամենայն աշխարհաց նաւահանգիստը, երկրիս վաճառականութեան կեդրոնը, ամէն ցեղի և ամէն կլիմայի ժողովրդոց համաժողովոյ տեղը . և մինչ աչքերն սեւեռած կը դիտեն այնտեղ, միտքն կը թռչի կը կտրէ ցամաքները և կը պատկերէ իւր մէջ այն անհուն և անթիւ կոր գծերը, զոր կը գծեն երկրագնդիս վերայ այն բիրաւոր նաւերն՝ որք կը պատահին միմեանց և կ'ողջունեն զիրար, նեղութիւնները և անհամար վտանգները, յաւերժական երթուկը ծովու և ցամաքի վերայ, անխոնջ մարդկութեան յաւիտենական աշխատութիւնը, և կը կարծէ ըմբռնել առաջին անգամ աշխարհիս կենաց օրէնքները : Եւ ի նմին ժամու կը թռչի նաւն, կ'ընդլայնի Տալիս գետն,

և նաւերու անտառներն՝ իբրև եղեգանց ըն-
 դարձակ սուրակներ՝ կը տեսնուին հորիզոնին
 վերայ, զոր թեթևակի կ'սսկեզօժէ ի մուտս
 խոնարհոյ արևն. բայց տակաւին ամբարա-
 նոցք կը յաջորդեն ամբարանոցներու, աւա-
 զանք՝ աւազաններու, շտեմարանք՝ շտեմա-
 րաններու, նաւարանք՝ նաւարաններու. Լոն-
 դրա, մեծն Լոնդրա միշտ այնտեղ է. Լոն-
 դրա՝ յետ. չորս ժամ նաւելու՝ տակաւին
 հետերնիս և քովերնիս է, յաջակողմն, ի
 ձախակողմն, զիմացնիս, մինչև ուր որ կը
 հասնի աչքն, սարակուսի և սարսափի խառն
 զգացմամբ մի կը տեսնուի տակաւին այն
 հրէշաւոր քաղաքն՝ որ կը գործէ և կը յա-
 ուալէ :



7550

2013

« Ազգային գրադարան



NL0032934

